AZG NEW PDF.qxd 11/05/2010 21:37 Page 1

Ազգ Azg
12 ՄԱՅԻՍ 2010 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 86 (4466)
ISSN: 1829-1651

# Գազատարը վերականգնվեց

Ինչպես տեղեկացնում է «Հայռուսգազարդ» ընկերության մամլո ծառայությունը, մայիսի 11-ի ժամը 04:00-ին վերականգնվել է Հայաստան բնական գազի մատակարարումը, որը ժամանակավորապես դադարեցվել էր Հյուսիսային Կովկասի բարձրլեռնային Գուդաուրի-Կոբի շրջանում սողանքների հետեւանքով վնասված մայրուղային գազատարի պատճառով:

Գազամուղը վթարվել էր մոտ երկու շաբաթ առաջ՝ ապրիլի 29-ին, բարձրլեռնային Կազբեկի շրջանում: Վրացական կողմը հայտարարել էր, թե վթարը կվերացվի մինչեւ մայիսի 1-ը, սակայն վատ եղանակային պայմանի պատճառով՝ աշխատանքներն ավելի երկար են տեւել:

Այս ընթացքում Հայաստանի սպառողներին գազ է մատակարարվել Աբովյանի պահեստարաններից:

Հ. Ա.

# Ըստ ՄԱԿ-ի տարեկան զեկույցի՝ Հայաստանից 700 հազարից մինչեւ 1,3 մլն մարդ է արտագաղթել



ՄԱԿ-ի զարգացման ծրագրի տարեկան զեկույցն այս անգամ վերաբերում է միգրացիային: Ըստ այդ զեկույցի՝ 1991 թվականից ցայսօր Հայաստանից արտագաղթել է 700 հազարից մինչեւ 1 մլն 300 հազար մարդ, ընդ որում՝ հիմնականում քաղաքային բնակավայրերից, բացասաբար ազդելով Հայաստանի զարգացման վրա. ակտիվ տարիքի հեռանալն ի հայտ է բերել եւ արմատավորել մի շարք քաղաքական, տնտեսական եւ սոցիալական բնույթի բացասական երեւույթներ: Չնայած նշվում է նաեւ, որ արտերկրում աշխատողների ուղարկած դրամական միջոցներն իրենց ընտանիքներին, այնուամենայնիվ, դրական գործոն են դարձել՝ սոցիալական, կրթական եւ այլ խնդիրներ լուծելու համար: Ըստ զեկույցը նախապատրաստող խմբի ղեկավար **Վարդան Գեւորգյանի**՝ միգրացիայի պատճառները ոչ միայն սոցիալական կամ տնտեսական են, այլեւ իրավունքների չպաշտպանվածության հետեւանք են.«Ամենահարուստ մարդը մեր երկրում մի ամսում կարող է դառնալ աղքատ, կապիտալների չերաշխավորվածության պատճառով», նշում է նա: Ընդ որում՝ ներկայումս եւս արտագաղթի վտանգն առկա է, եւ առաջիկայում սպասվելիք հողերի խոշորացման պատճառով դա կարող է տեղափոխվել գյուղական վայրեր:

# Տնտեսական այց՝ քաղաքական ենթատեքստով



Երեկվա լրահոսում հետաքրքրական էր Արտաշատի պահածոների գործարան Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյան, վարչապետ Տիգրան Սարգսյան եւ ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյան եռյակի համատեղ այցելությունը, որը ճննախույզ հայացքի դեպքում անշուշտ դիտարկելի է քաղաքական տեսանկյունից: «Արտֆուդ» ապրանքանիշը ներկայացնող այս գործարանում նոր արտադրամաս էր բացվում, որի ժապավենը, ճիշտ է, պետք է կտրեին վարչապետն ու ԱԺ նախագահը, բայց ի վերջո Հովիկ Աբրահամյանի փոխարեն վստահվեց Գագիկ Ծառուկյանին: Նոր հոսքագծի բացումն, իհարկե, ուրախալի իրադարձություն է, որը, վարչապետի խոսքերով, նոր հնարավորություններ է ստեղծելու եւ խթանելու է գյուղատնտեսության զարգացումը, մանավանդ որ այս գործարանում 550 բանվոր է աշխատում, գործարանն էլ 700 խոշոր հարկատուների ցուցակում է: Սակայն այս այցին նետված քաղաքական հայացքը նկատում է ավելին, քան տնտեսական իրողությունն է. մի տեսեք, է, Ծառուկյանը քննադատում էր կառավարությանը, մամուլն անընդհատ գրում է վարչապետ-ԱԺ նախագահ հակադրության մասին, կան նաեւ այնպիսի կանխատեսումներ, թե մինչեւ սեպտեմբեր ԱԺ նախագահի, ԲՀԿ ղեկավարի դիրքերը պետք է խախուտանան: Իսկ ահա երեկվա մեկ միասեղ այցով մի քանի նապաստակ խփվեց՝ ոչ մի կառավարություն- Ծառուկյան կամ վարչապետ-ԱԺ նախագահ հակադրություն էլ չկա, ամեն ինչ խաղաղ-ներդաշնակ է, չուզողների ջգրու: Դժվար է ասել՝ երեւութակա՞ն է սա, թե՞ ...

# Ախալքալաքում ճնշումների պատճառով հայ թեկնածուները հրաժարվում են պայքարից

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մայիսի 30-ին Վրաստանում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ են, որոնց մասնակցության փորձ են անում մի քանի հայ թեկնածուներ՝ մտածողության ու մոտեցման առումով Ջավախքի հայաթափման դեմ պայքարելու վճռականությամբ: Նրանց զգալի մասը ներկայացված է վրացական ընդդիմադիր կուսակցությունների ցուցակներում:

Վրացական լրատվամիջոցները, սակայն, տեղեկացնում են, թե տեղական ընտրությունների քվեարկության օրվան մոտ ընդդիմադիրների շարքերում թեկնածուները կարող են պակասել: Խնդիրն այն է, որ ընդդիմադիրների հայտարարությունների համաձայն, վրացական իշխանությունների ճնշումների հետեւանքով որոշ թեկնածուներ հրաժարվում են հետագա պայքարից:

Տես էջ 2

ՀԱՅ-ԹՈՒՐՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# «Հայկական կողմն, իհարկե, չէր կարող անվերջ սպասել»

## Կարծում է ամերիկացի վերլուծաբանը

**Ո՞ւմ կմեղադրեն միջազգային հանրությունը, միջնորդ երկրները, եթե հայ-թուրքական գործընթացը կասեցվի կամ սառեցվի: Այս հարցի պատասխանը մի քանի ամիս առաջ շատերն էին որոնում, եւ ամենեւին էլ միանշանակ չէր, թե գործընթացի՝ թեկուզ սառեցման հետեւանքով, չի՞ մեղադրվի արդյոք Հայաստանը:**

**Այժմ, երբ ՀՀ նախագահի ուղերձով հայ-թուրքականը սառեցված վիճակում է, միջազգային հանրության գնահատականն ու վերաբերմունքը բավական ուշագրավ են դառնում: Մեր թերթը տեղեկացրել է, թե ինչպես են արձագանքել գործընթացի սառեցմանը միջնորդ երկրները, հետեւաբար չենք խոսի այդ մասին, միայն նշենք, որ օրեր առաջ հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի նախկին համակարգող, պաշտոնաթող ամերիկացի դիվանագետ Դեյվիդ Ֆիլիպսը, որը հիմա ղեկավարում է Հակամարտությունների կանխարգելման եւ խաղաղապահ նախաձեռնությունների վաշինգտոնյան կենտրոնը, հանդես է եկել բավական հետաքրքրական հայտարարություններով: Ֆիլիպսը կարծիք է հայտնել, որ հայ-թուրքական գործընթացի հենց սկզբից թուրքական կողմը երկխոսության մեջ մտավ՝ որոշակի ենթադրություններով. «Թուրքիայի առաջին ենթադրությունն այն էր, որ հայ-թուրքական գործընթացը կխթանի Մինսկի խմբի գործունեությունը: Իսկ երկրորդ ենթադրությունն այն էր, որ, ըստ թուրքերի, հայերի հետ սկսած գործընթացով հնարավորություն կստեղծվեր վերջ տալու Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին: Թուրքիան իր այս երկու ենթադրություններում էլ սխալվեց: Նրանք երբեք էլ արձանագրությունների վավերացման հարցում լրջորեն չեն տրամադրվել», եզրակացնում է Ֆիլիպսը: Ամերիկացի վերլուծաբանը նաեւ հայտնել է. «Ղարաբաղի հարցը որեւէ կապ չունի հայ-թուրքական արձանագրությունների հետ: Անկարան չպետք է դներ իր ուշադրությունը այս արձանագրությունների տակ՝ ցանկալին որպես իրականություն ներկայացնելով: Իսկ հայկական կողմն, իհարկե, չէր կարող անվերջ սպասել, այդ պատճառով էլ որոշեց սառեցնել արձանագրությունների վավերացման գործընթացը», նշել է վերլուծաբանը:**

**Ֆիլիպսը չի կարծում, թե այսօր Թուրքիայի շահից է բխում արձանագրությունների վավերացումը. «Եթե Թուրքիայի կառավարությունն անի այդ քայլը երկրում ընտրությունների նախաշեմին, ապա կկորցնի ընտրողների վստահությունը», եզրափակել է Դեյվիդ Ֆիլիպսը:** **Հ. ԱՖՅԱՆ**

# Արդար դատի հավատը նվազում է Դինքի փաստաբանների շրջանում

**Հրանտ Դինքի ընտանիքի փաստաբանները բողոք են ներկայացրել ընդդեմ Ստամբուլի փոխկառավարիչ Մուսթաֆա Գյուլանի՝ մեղադրելով նրան իշխանությունը չարաշահելու եւ թույլ չտալու, որ սպանության գործում ոստիկանության հավանական դերի վերաբերյալ ներքին գործերի զեկուցագիրը հանձնվի իրենց ուշադրությանը: Փաստաբաններ Ֆեթհիյե Չեթինն ու Իսմայիլ Ջեմ Հալավուրտը պնդում է, որ այդ զեկուցագրի ծանոթությունը կարեւոր է մի շարք ձեռնարկված միջոցառումների պարզաբանման (ինչպես, օրինակ, ոստիկանության պետի Ջելալեդդին Ջերրահին բոլոր պարտականություններից ազատելու վերաբերյալ մարտի 12-ի որոշումը) համար: Դինքի ընտանիքի անդամների հետ նրանք նաեւ պահանջում են, որ սպանությանն առնչվող դատախազներն ամբողջապես զբաղվեն այդ գործով, որպեսզի պետք եղած ուշադրությունը դարձնեն դատավարությանը եւ ոչ թե իմիջիայլոց դիտարկեն այն:**

# Վանի հերոսամարտը

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

95 տարի առաջ՝ 1915 թ. այս օրերին թուրքական իշխանությունները, օգտվելով սկսված համաշխարհային պատերազմի ընձեռած պատեհ հնարավորությունից, որոշեցին իրականացնել իրենց հրեշավոր ծրագիրը՝ բնաջնջելու միջոցով լուծել Հայկական հարցը: Այնպես որ, Հայոց եղեռնը նախօրոք մտածված, մանրամասն ծրագրված ու հատուկ այդ նպատակով ստեղծված պետական կառույցների կողմից իրականացվող քաղաքականություն էր, որին զոհ գնացին ավելի քան մեկուկես միլիոն անմեղ հայեր:

Արյունարբու ոստխն անխնա տնավեր էր անում ու կոտորում միլիոնավոր անմեղ մարդկանց: «Քաղաքակիրթ» աշխարհն զբաղված իր աշխարհաբաժան գզվռտոցով, անտարբեր նայում էր այդ ամենին, իսկ հայ ժողովուրդն, այլ ելք չունենալով՝ ստիպված ոտքի ելավ ինքնապաշտպանվելու, գազանացած արյունախում ոհմակին դիմագրավելու, սեփական պատիվն ու կյանքը փրկելու համար: Ցավոք, ցիրուցան, հանկարծակիի եկած, հիմնականում անզեն ու գլխատված ժողովուրդը չկարողացավ կազմակերպել համընդհանուր, կազմակերպված, միասնական պաշտպանություն եւ Արեւմտյան Հայաստանի մեծ մասում տեղահանվեց ու կոտորվեց անխնա: Սակայն մի շարք գավառներում, այնուամենայնիվ, հայ ժողովուրդը կարողացավ կազմակերպված ինքնապաշտպանվել եւ փրկվել թուրքական յաթաղանի ամենակուլ երախից: Հերոսական էջեր գրվեցին Արեւմտյան Հայաստանի մի շարք գավառներում՝ Շատախում, Գավաշում, Փեսանդաշտում, Տարոնում, Մուշում, Սասունում, Շապին-Գարահիսարում, Խնուսում, Սուետիայում (Մուսա լեռ): Սակայն ուժերն անհամեմատ անհավասար էին, հայերը կռում էին պարտություն պարտության հետեւից: Իսկ արյան խրախճանքի ելած թուրքը հաղթելու դեպքում, ինչպես հատուկ է եղել իրեն (եւ՝ է), ոչնչացնում էր միայն:



*Վանի պաշտպանության բազմաթիվ խմբերից Ռուբեն Հյուսյանի խումբը:*

Տես էջ 4

AZG NEW PDF.qxd 11/05/2010 21:50 Page 1



# Գիտության ոլորտը երիտասարդացնել, խթանել հետազոտությունները ու զարգացնել հայագիտությունը

Խթանել գիտության ոլորտում նորարարությունները, ոլորտը երիտասարդացնել, արդիականացնել նյութատեխնիկական բազան եւ ենթակառուցվածքները: Սրանք ու էլի բազմաթիվ խնդիրներ Գիտության պետական կոմիտեն մտադիր է լուծել մշակած տասնամյա ռազմավարության արդյունքում, որ շուտով կներկայացվի կառավարությանը:

Գիտության ոլորտում արդի խնդիրներից է երիտասարդության սակավաթիվ ներկայությունը: Գիտական գործունեությամբ զբաղվում 17.000 մարդ՝ ներառյալ բուհերի դասախոսները: 2009թ. 25-35 տարեկան գիտնականների թիվը աճել է: Թվում է, թե գիտության մեջ պետք է զգացվի երիտասարդության շունչը, սակայն իրականությունն այլ է:

«Ստանում են թեկնածուական աստիճան եւ թողնում գիտությունը: Օրինակ՝ բժշկության ոլորտում թեկնածուական պաշտպանածների 10 %-ն էլ հետագայում գիտական գործունեությամբ չի զբաղվում: Ոլորտում նկատվում է ծերացում, քանի որ գիտնականների գերակշռող հատվածի տարիքային խումբը կազմում է 60-70: 1993-2009թթ. թեմաների ղեկավարների անունները չեն փոխվել, այդ առումով նույնպես երիտասարդացումը դանդաղ է ընթանում», ասաց Գիտության պետական կոմիտեի (Գիտպետկոմ) նախագահ **Սամվել Հարությունյանը** Ջերմուկում տեղի ունեցած «Գիտության զարգացման հիմնահարցերը» խորագրով գիտաժողովի մասնակից գիտնականներին:

Խնդիրներ կան գիտական հրապարակումների կապակցությամբ: Միջազգային վերլուծական կայքերում Հայաստանը տարեկան տպագրում է 500 գիտական հոդված: Համեմատություն կատարենք Թուրքիայի հետ. մինչեւ 2003թ. գիտական հոդվածների տպագրությամբ Թուրքիան մեզանից հետ էր, սակայն ֆինանսավորման ծավալներն աճեցին, եւ գիտական հոդվածների թիվն անհամեմատ աճեց: Նա նկատում է, որ լավագույն աշխատանքները հրապարակվում են ֆիզիկայի ոլորտում, երկրորդ եւ երրորդ տեղերը կիսում են քիմիան եւ կենսաբանությունը:

«Կան սարքավորումների խնդիրներ: Կան հաստատություններ, որտեղ վերջին 20 տարվա ընթացքում տեխնիկայի թարմացում չի եղել: Բացակայում է գիտատեխնիկական միասնական ցանցը՝ ներառյալ էլեկտրոնային գրադարանների համակարգը: Հայ գիտնականները միջազգային ցանցից օգտվելու հնարավորություն չունեն»:

Գիտպետկոմի ղեկավարը մտահոգված է. նկատվում է կադրերի արտահոսք, 1991-2008 թթ. կրկնակի նվազել է գիտնականների թվաքանակը: «Գիտական կարիերայով զբաղվելու գրավչություն չկա»:

Ներկայացնելով խնդիրները, Սամվել Հարությունյանը համոզված է, որ ներկայացված ռազմավարության շնորհիվ մինչեւ 2020 թ. խնդիրները կլուծվեն: Նա առանձնացնում է 6 թիրախ, որոնք պետք է առաջնահերթ լուծում ստանան՝ ձեւավորել գիտության եւ առաջատար տեխնոլոգիաների ոլորտի կայուն զարգացում ապահովող համակարգ, բարձր որակավորում ունեցող երիտասարդների թվաքանակի կայուն աճի ապահովում, հետազոտությունների խթանում, հայագիտության ոլորտի առաջնային զարգացում, միջազգային գիտական եւ գիտատեխնիկական համագործակցության զարգացում, համաշխարհային գիտատեխնոլոգիական տարածում դիրքի ձեռքբերում եւ հաստատում:

Ըստ այդմ մշակվել է մարտավարություն: Անհրաժեշտ է ստեղծել մրցունակ ոլորտ գիտատեխնիկական հետազոտությունների եւ մշակումների համար, ապահովել զարգացման կայուն եւ անհրաժեշտ պայմաններ, հետազոտությունների համար վերահսկել եւ արդյունավետ օգտագործել տրամադրվելիք միջոցները, իրականացնել ինստիտուցիոնալ բարեփոխումներ եւ արդիականացնել կառավարման ձեւերը:

Ռազմավարական ծրագրում առանձին կետով եւ առանձին ֆինանսավորմամբ տեղ է հատկացվել հայագիտության խնդրին: Առաջնությունը Գիտպետկոմը տվել է ԳԱԱ-ին, որովհետեւ նրանք երկար տարիներ կոորդինացրել են այդ ոլորտը, ունեն առաջատար մասնագետներ: «Հայագիտությամբ զբաղվող հիմնական կառույցը ԳԱԱ-ն է: Դա չի նշանակում, որ առանձին ինստիտուտներ չեն կարող զբաղվել այդ խնդրով», նկատում է Սամվել Հարությունյանը: Նա նկատում է, որ հայագիտությունը դարձել է ցավոտ խնդիր: Թիվ մեկ խնդիրը ներկայիս հայագետների խորհրդային տարիներին ստացած կրթությունն է: «Նոր շնչի, առողջ մտածելակերպի, ճշմարտությունից չվախեցող մարդկանց կարիք ունենք: Պատմամշակութային ժառանգությունը նորմալ մատուցելու տեսանկյունից, լեզվական, ծագումնաբանության հարցերի առումով հայագիտությունը լուրջ անելիքներ ունի: Խնդիրը լուրջ քաղաքական նշանակություն է ստանում»: Նա նկատում է, որ հայ ժողովրդի պատմության մասնագետներ կան, որոնք ծագումնաբանության վերաբերյալ լուրջ տարաձայնություններ ունեն: Օրինակ՝ հայոց պատմության քառահատորյակի հրատարակությունը ֆինանսավորվում է պետական բյուջեից, սակայն դեռ չի հրատարակվել, որովհետեւ ծագումնաբանության վերաբերյալ հստակ մոտեցումներ չկան:

Ռազմավարական ծրագրով ենթադրվում է ունենալ անգլիալեզու հայագիտական մի շարք հանդեսներ, որտեղ հոդվածները արտերկրում էլ կարդան:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ջերմուկ-Երեւան

ԳՈՒՅԺ

# Վախճանվեց Տիրայր արք. Մարտիկյանը



**Երեկ, կյանքի 80-րդ տարում, Սոֆիայում վախճանվել է Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագույն միաբաններից, Հայ առաքելական եկեղեցու նվիրյալ եւ բազմավաստակ սպասավոր Ռումինիայի եւ Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ գերաշնորհ Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանը:**

**Ծնվել է 1930 թ. մայիսի 24-ին Բեյրութում: 1944-47 թթ. ուսանել է Երուսաղեմի պատրիարքության Ժառանգավորաց վարժարանում: Այնուհետեւ ուսումը շարունակել է Էջմիածնի հոգեւոր ճեմարանում: 1951 թ., ձեռնադրվել է սարկավագ: 1952 թ. ավարտելով ուսումը՝ նշանակվել է ճեմարանի քարտուղար: 1955 թ. նշանակվել է Բաքվի հայոց հոգեւոր հովիվ: 1956 թ. Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի ձեռամբ ստացել է վարդապետական աստիճան: 1958-1960 թթ. ընտրվել է Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ, իսկ 1960-ից Ռումինիայի եւ Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդն է: 1964 թ. ձեռնադրվել է եպիսկոպոս:**

**Տիրայր սրբազան Մարտիկյանը արժանացել է բազմաթիվ բարձրագույն պարգեւների: Ռումինիայի Հանրապետությունը նրան շնորհել է «Աստղ» շքանշան: 1980 թ. արժանացել է արքության տիտղոսի: Բարձր պարգեւ է նրան շնորհել նաեւ Խաղաղության համաշխարհային խորհուրդը:**

Հ. Հ.

# Ախալքալաքում ճնշումների պատճառով հայ թեկնածուները հրաժարվում են պայքարից

*1-ին էջից*

Վրացական Ազգային ընդդիմադիր խորհրդի անդամ Լադո Բոժաձեն օրերս հայտարարել էր, որ հստակ միտում է նկատվում հենց Ազգային խորհրդի թեկնածուների վրա ճնշումներ բանեցնելու ուղղությամբ: Մասնավորապես, Բոժաձեի խոսքերով, շանտաժի եւ ճնշման են ենթարկվել ընդդիմադիր թեկնածուները Ախալքալաքում, որտեղ «այդ գործողությունները ղեկավարում են շրջանի վարչական ղեկավարի պաշտոնակատար Վիտալի Թորոսյանը, Վրաստանի խորհրդարանի նախկին անդամ Համլետ Մովսիսյանը եւ պետանվտանգության հարցերով պատասխանատու Կախա Խուցիշվիլին»: Օրինակ, Գոմինիա գյուղում ընտրական հանձնաժողովի ողջ անձնակազմը Համլետ Մովսիսյանի ազգականներից է բաղկացած:

Ամեն դեպքում, ճնշումների հետեւանքով իրենց թեկնածությունը հանել են Թենգիզ Մարղեբաձեն, Ռոբերտ Ստամբոլցյանը, Գառնիկ Քերոբյանը, Ռոբերտ Թոքաձեն, Նանա Ավետիսյանը, Աշոտ Բանդիկյանը:

Հետաքրքրական է, թե այս հարցերի առնչությամբ ինչպիսի տեսակետ կարող է արտահայտել ներկայումս Թբիլիսիում գտնվող Հարավային Կովկասում Եվրոմիության հատուկ ներկայացուցիչ **Պիտեր Սեմնեբին:** Վրաստանում նախընտրական իրավիճակին ծանոթանալու նպատակով Վրաստան ժամանած Սեմնեբին հայտարարել է, թե մտադիր է հանդիպել իշխանությունների, քաղաքական կուսակցությունների, ընտրական մարմինների ներկայացուցիչների հետ:

«Եվրոմիությունը շահագրգռված է Վրաստանում ազնիվ եւ անաչառ ընտրությունների անցկացմամբ», հայտարարել է Սեմնեբին: Տեսնես՝ որքա՞ն է այդ շահագրգռվածությունը բավարարելու այս ընտրություններում:

# Կարուսելների անվտանգությունը՝ հրատապ խնդիր

## *Ուրախ ժամանցի համար պետք է վճարել առողջությամբ*

**«Այսօր Երեւանում գործող 47 կարուսելներից միայն 13-ն են անցել փորձաքննություն: Ես դիմում եւ խնդրում եմ բոլոր ծնողներին, որ երեխաների կյանքի հետ չխաղան», երեկ «Հենարան» ակումբում՝ ասուլիսի ժամանակ ասաց արտակարգ իրավիճակների նախարարության տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի տնօրեն Աշոտ Պետրոսյանը եւ հավելեց, որ «Հաղթանակ» զբոսայգում տեղակայված ոչ մի կարուսել փորձաքննություն չի անցել:**

**Ասուլիսի թեման՝ «Կարուսելների անվտանգության վերահսկումը», մեր իրականության մեջ դարձել է հրատապ, դրա փաստացի ապացույցը մայիսի 9-ի երեկոյան «Հաղթանակ» զբոսայգու «Թայֆուն» ատրակցիոնի՝ ընթացքի ժամանակ կոտրվելն էր: Հիշեցնենք, որ այդ պատահարի հետեւանքով 4 հոգի մարմնական վնասվածքներով տեղափոխվել էին հիվանդանոց:**

**«Թայֆուն» ատրակցիոնը շահագործման էր հանձնվել մոտավորապես մի ամիս առաջ, նախագծվել էր ոչ թե լիցենզավորված կազմակերպության, այլ անհաշի կողմից եւ տեղադրվել էր ապօրինաբար:**

**«Տնտեսվարող սուբյեկտի հետ կնքած պայմանագրի հիման վրա մենք կատարում ենք միայն փորձաքննություն, իսկ ստուգում, հսկում եւ վերահսկում գործառույթները դրված են վտանգավոր օբյեկտի, տնտեսվարող սուբյեկտի վրա, վերջիններս պարտավոր են ունենալ պատասխանատու անձ կամ ծառայություն, որոնք կիրականացնեն ստուգման ու վերահսկողության գործառույթները», արդարացավ Աշոտ Պետրոսյանը:**




Փաստորեն, դանակը պետք է հասներ ոսկորին, որպեսզի նոր-նոր սկսվեին քննարկումներն ու բնակչության իրազեկելը:

«Արտակարգ իրավիճակների նախարարությունն իր բարեփոխումների շրջանակում նախատեսում է ստեղծել արտակարգ իրավիճակների տեսչություն, որը կիրականացնի հսկողություն, վերահսկողություն եւ ամենակարեւորը՝ կիհայտնաբերի անպատասխանատու օբյեկտներն ու սուբյեկտները», ասաց ասուլիսի մյուս բանախոսը՝ արտակարգ իրավիճակների նախարարության լրատվության վարչության պետ **Նիկոլայ Գրիգորյանը** եւ հավելեց, որ կատարված դեպքը հետեւանք է օրենսդրական բացթողման. չկա այն կազմակերպությունը, որը կարող էր իրականացնել նման օբյեկտների վերահսկողությունն ու բացահայտումը:

«Բացի ազգային կենտրոնից, Հայաստանում այսօր գործում են նաեւ հավաստարմագրված 3 կառույցներ՝ ՍՊԸ-ներ, որոնք իրականացնում են ազգային կենտրոնի նույն գործառույթները: Օբյեկտը, որտեղ տեղի է ունեցել դժբախտ պատահարը, խախտելով օրենքը ՝ ո՛չ գրանցվել էր կենտրոնում, ո՛չ էլ անցել էր փորձաքննություն: Պայմանագիրը կնքել էր հավաստարմագրված «Տեգ» կազմակերպության հետ, որն էլ կա՛մ «հրագործել» է, կա՛մ պետք է հրագործեր փորձաքննությունը», տեղեկացրեց Աշոտ Պետրոսյանը:

Այսօր արտակարգ իրավիճակների նախարարությունը բոլոր այդ ՍՊԸ-ներում, որոնց տրվել են լիցենզիաներ, կրկին անցկացնում է փորձաքննություն: Պարզվել է, որ կոնկրետ «Տեգ» ՍՊԸ-ն չունի համապատասխան մարդկային ներուժ ու տեխնիկական միջոցներ, որպեսզի իրականացնի փորձաքննություն ու վերահսկողություն:

**Ասուլիսի ժամանակ Երեւան քաղաքի փորձագիտական ծառայության պետ Վլադիմիր Հովսեփյանը տեղեկացրեց, որ «Հաղթանակ» զբոսայգու «Ուրախ ժամանց» ՍՊԸ-ում 7 կարուսելների փորձաքննությունն իրականացրել է «Տեգ» տեխնիկական անվտանգության ՍՊԸ-ն, որի կողմից 2009 թվականի օգոստոսին տրվել են դրական եզրակացություններ, ինչն ուժի մեջ է մինչեւ 2010-ի օգոստոսը, սակայն դժբախտ պատահարների դեպքում պետք է իրականացվի կրկնակի փորձաքննություն:**

**Վլադիմիր Հովսեփյանը նշեց. «Կոնկրետ «Թայֆուն» ատրակցիոնը փորձաքննություն չի անցել ու գրանցված չի եղել: «Թայֆուն»-ի շահագործումը դադարեցվել է, իսկ պատասխանատվությունը կրելու է օբյեկտ-շահագործող կազմակերպությունը: 3 միլիոն դրամ տուգանք է նշանակվել «Թայֆունի» եւ 2 այլ ատրակցիոնների համար»:**

**Նիկոլայ Գրիգորյանի խոսքով՝ ընդհանրապես պատասխանատվություն կրում է ե՛ւ օբյեկտը, ե՛ւ նա, ով անցկացրել է փորձաքննությունը, իհարկե, եւ տուժածները պետք է ստանան փոխհատուցում:**

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

**Հ.Գ.** Որպեսզի ընթերցողների մեջ թյուրիմացություն չառաջանա, տեղեկացնենք, որ տվյալ դեպքում շահագործողը «Ուրախ ժամանց» ՍՊԸ-ն է, որը պատասխանատվություն է կրելու պատահածի համար: Այս մասին «**Ազգին**» ասաց տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի պետի տեղակալ Արամ Օհանյանը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 11/05/2010 20:45 Page 1



ԱԶԳ

## Անցուդարձ

Թեքեյան մշակութային միության Ալթադենայի (Լոս Անջելես) Պեշկյոթյուրյան կենտրոնը 2 օր առաջ հյուրընկալել էր թուրք հայտնի պատմաբան **Թաներ Աքչամին**: Երեկոն վարում էր պրոֆ. **Օշին Քեշիշյանը**:

Թաներ Աքչամը դահլիճին ողջունեց անսխալ շեշտադրությամբ հայերենով՝ «Բարի երեկո, բարեկամներ: Շնորհակալ եմ ձեր հրավերի համար»: Հետո, անցնելով անգլերենի, նա բավական հանգամանալի անդրադարձավ Հայոց ցեղասպանության վերաբերյալ թուրքական փա-

հանդեպ թուրք հասարակության մեջ առաջացած տեսակետների բախումներով: Հիշատակենք միայն 30 հազար թուրք մտավորականների ստորագրահավաքը, որով թուրքերը ներողություն էին խնդրում 1915 թվականի արհավիրքի համար: Թաներ Աքչամը կարծում է, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում 2 պետություններին պիտի աջակցի հայկական սփյուռքը, որի դերակատարումն անչափ մեծ է եղել հենց թուրք հասարակության աչքերը բացելու տեսան-

Թաներ Աքչամը հեղինակել է 11 գրքեր, որոնք թարգմանվել են 9 լեզուներով: 1996-ին Հանովերի համալսարանում դոկտորական թեզ է պաշտպանել Հայոց ցեղասպանությանն առնչվող խնդիրների վերաբերյալ: 2008-ին նշանակվել է ԱՄՆ-ի Մասաչուսեթսի նահանգի «Քլարք» համալսարանի Ցեղասպանության ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն: Թաներ Աքչամը շարունակաբար բարձրացնում է Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը, որի պատճառով վաստակել է թուրք

# Ցեղասպանության ուրացումը Թուրքիայի համար ազգային ապահովության խնդիր է

*Ասում է Թաներ Աքչամը*

ղաքականության մանրամասներին: Ինչո՞ւ Թուրքիան շարունակում է սարսափել Ցեղասպանության ընդունման փաստից: Թուրք պատմաբանը Ալթադենայում եւս, ինչպես մի քանի ամիս առաջ Անթիլիասում, Թուրքիայի մերժողական կեցվածքը բացատրում է, այսպես ասած, ազգային անվտանգության սինդրոմով: Թուրքական ներկա կառավարությունը վախենում է ընդունել իր նախնիների իրականացրած ոճիրը, որովհետեւ խնդիրը դիտարկում է ազգային ինքնության պահպանման, ազգային անվտանգության տեսանկյունից: Ցեղասպանության ընդունումը կարող է նշանակել ոչ միայն նյութական փոխհատուցումներ, այն կարող է բարոյական մեծ վնաս պատճառել երկրի ազգային իմիջին՝ ոչնչացնել թուրքական պատմության ու արժեքների թղթե տնակը, արժեքներ, որոնք երկար ժամանակ մատուցվել են թուրք ժողովրդին: Այլ խոսքով, Ցեղասպանության ուրացումը պաշտպանում է Թուրքիայի ապահով լինելու զգացումը:

Այնուամենայնիվ, այսօրվա Թուրքիան այլեւս առաջվանը չէ: «Էրդողանը Թուրքիայի մինչ այսօր եղած ամենաժողովրդավար վարչապետն է», ասում է գիտնականը, միաժամանակ չմոռանալով ընդգծել, որ «այդ ժողովրդավարությունը ընդամենը 0,001 տոկոս է: Բայց թեկուզ այդ չափով՝ էլի ժողովրդավարություն է»:

Թուրքիան եւս ժողովրդավարացման ճանապարհին է, եւ դրա ապացույցները մենք տեսնում ենք հենց Հայկական ցեղասպանության




կյունից: Պետք է արժանին մատուցել հայկական սփյուռքին, որ թուրքերի ներկա սերնդին ներկայացրեց նրա անցյալը: Թուրքերը զարմացան, որ գոյություն ունի մի բան, որի մասին իրենք մինչ այժմ չեն իմացել: Նրանք այսօր ուզում են իմանալ այդ անցյալի մասին: Եվ նրանց պիտի օգնել հասկանալու եւ ճանաչելու իրենց անցյալը: Պատմաբանների հանձնաժողով ստեղծելու փոխարեն առավել կարեւոր է այնպիսի հանձնաժողովի ստեղծումը, որը կնպաստի 2 երկրների հասարակությունների ինքնաճանաչողությանը, կօգնի նրանց միջեւ փոխվստահության առաջացմանը:

ազգայնականների թշնամանքը: Նրա վերջին գրքի վերնագիրն է՝ «Ամոթալի արարք. Հայկական ցեղասպանությունը եւ թուրքական պատասխանատվության խնդիրը»:

Վերջում անդրադառնանք, որ ընդարձակ սրահում թուրք գիտնականի հետ բավական հետաքրքրական հանդիպմանը ներկա էին Լոս Անջելեսի լրագրողական համայնքի հատուկենտ ներկայացուցիչներ միայն, ո՛չ լրատվական ծրագրերը, ո՛չ էլ հայատառ մամուլը գրեթե չանդրադարձան այս բավական ուշագրավ միջոցառմանը:

ԴԻԱՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ
Լոս Անջելես

ԵԽԽՎ ՆԱԽԱԳԱՀ, ԹԵ՞...

# Չավուշօղլուն ցեղասպանության հուշարձան չի այցելի

Եվրոպական կառույցներում էլ, որքան կարելի է դատել ունեցած օրինակներով, ազգային բնութագրիչը գրեթե միշտ առավելապես ցցուն է արտահայտվում այլ ազգերի հետ խնդիրների առկայության դեպքում՝ անկախ նրանից, թե ինչ են քարոզում եվրոպական կառույցներում հայտնվածներն ու դրանք ներկայացնողները: Ավելի շուտ, թերեւս կան եվրոպականացող երկրների ներկայացուցիչների համար այնպիսի հարցեր, որոնց դեպքում քաղաքացիական հասարակության կազմակերպություններ երբեւէ չներկայացնելու անցյալը անհնար է դարձնում մարդու իրավունքների գերակայությունը հռչակել բոլոր, անխտրելիորեն բոլոր հարցերի առնչությամբ:

«**Ազգն**» արդեն տեղեկացրել է, որ Հայաստան է ժամանում Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Մովլութ Չավուշօղլուն՝ ազգությամբ թուրք խորհրդարանականը, որ, «**Ազգի**» տեղեկություններով, Երեւանում պիտի ժամաներ գիշերը: ԵԽԽՎ նախագահի երկօրյա այցի ընթացքում նախատեսված են հանդիպումներ ՀՀ նախագահի, ԱԺ նախագահի, ԱԳ նախարարի, ԱԺ խմբակցությունների եւ արտախորհրդարանական ընդդիմության ներկայացուցիչների հետ:

ԱԺ ՀՅԴ խմբակցությունն արդեն իսկ հայտարարել է, որ չի մասնակցելու մայիսի 13-ին ԵԽԽՎ նախագահ Մովլութ Չավուշօղլուի հետ նախատեսված հանդիպմանը: Որոշումը կայացվել է երեկ խմբակցության նիստում: Պատճառը, ըստ խմբակցության ղեկավար Վահան Հովհաննիսյանի, Ցեղասպանության հուշահամալիր չայցելելու Չավուշօղլուի որոշումն է:

Վահան Հովհաննիսյանը լրագրողներին ասել է, որ կառույցի նախկին ղեկավարները, որ այցելել են Հայաստան, պարտադիր եղել են նաեւ Ծիծեռնակաբերդում: ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակության դաշնակցական անդամ Արմեն Ռուստամյանը նույնպես հրաժարվել է մասնակցել Չավուշօղլուի եւ ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակության հանդիպմանը:

ՀՅԴ խմբակցությունը, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանին ուղղված հայտարարության մեջ նշել է, որ տեղեկացված է, թե ԵԽԽՎ նախագահ Մովլութ Չավուշօղլուն ցանկություն է հայտնել հանդիպելու ՀՀ ԱԺ ՀՅԴ խմբակցության ներկայացուցիչների հետ: «Սակայն նա հրաժարվել է 1915 թ. Հայոց ցեղասպանության հուշարձան արարողակարգային այցելությունից, ինչը, մեր կարծիքով, հարիր չէ հեղինակավոր միջազգային կազմակերպության ղեկավարին: Նախկինում ԵԽԽՎ ղեկավարության ներկայացուցիչները երբեք իրենց թույլ չեն տվել նման անհարգալից վերաբերմունք, անկախ այն բանից՝ նրանց երկրները ճանաչե՞լ են, թե՞ չեն ճանաչել Հայոց ցեղասպանության փաստը», նշված է հայտարարությունում:

Ըստ Դաշնակցության, Ծիծեռնակաբերդ չայցելելու մոտեցմամբ Չավուշօղլուն փաստորեն չի թաքցնում, որ Հայաստան է այցելում ոչ այնքան որպես ԵԽԽՎ ղեկավար, որքան որպես թուրք քաղաքական գործիչ: «Այս պայմաններում մեր խմբակցությունը նպատակահարմար չի գտնում հանդիպել նրա հետ»: :

Չավուշօղլուին չընդունելու կոչերով իշխանություններին, իրենց հերթին, դիմել է ՍԴՀԿ «Սարգիս Տխրունի» ուսանողական-երիտասարդական միությունը՝ նույն պատճառաբանությամբ, թե ԵԽԽՎ նախագահը չի այցելելու Ծիծեռնակաբերդ: «Կոչ ենք անում, որ Հայաստանի բարձրագույն իշխանությունները չընդունեն նրան, իսկ վերջինիս համար ընդունելություն կազմակերպի ՀՀ արտաքին գործերի նախարարության բաժնի վարիչներից որեւիցե մեկը»:

Չնայած այս ամենին, ԵԽԽՎ նախագահի այցելության օրակարգով նշված հանդիպումներից զատ նախատեսված է նաեւ հանդիպում Դավիթ Հարությունյանի հետ, որ նախագահում է Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում, որը պատասխանատու է 2008 թ. մարտի մեկի եւ երկուսի դեպքերի քննության ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի առաջարկությունների կատարման մոնիտորինգի համար:

Հանդիպումներ են նաեւ նախատեսված մարդու իրավունքների պաշտպանի, դիվանագիտական համայնքի եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Մեդվեդեւը՝ Թուրքիայում, Սերդյուկովը՝ Բաքվում

Ինչպես տեղեկացնում է «ՌԻԱ Նովոստի» գործակալությունը, երեկ աշխատանքային այցով Բաքու ժամանեց Ռուսաստանի պաշտպանության նախարար Անատոլի Սերդյուկովը: Ադրբեջանում ՌԴ պաշտպանական գերատեսչության ղեկավարը հանդիպումներ ունեցավ նախագահ Ալիեւի եւ ադրբեջանցի իր գործընկեր Սաֆար Աբիեւի հետ: Հատկանշական է, որ նույն օրերին Թուրքիայում պաշտոնական այցով կգտնվի Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը, որն էլ իր հերթին հանդիպումների շարք կունենա թուրքական քաղաքական վերնախավի հետ եւ մի շարք երկկողմ պայմանագրեր կստորագրի: Արդյոք պայմանագրերի ստորագրում կլինի՞ նաեւ Բաքվում՝ Սերդյուկովի այցի ժամանակ, դեռեւս չի նշվում, հայտնի չէ նաեւ, թե արդյոք «թուրքական եղբայրական» պետություններ ռուսական բարձրաստիճան պաշտոնյաների այցերը որեւէ կերպ առնչվո՞ւմ են օրեր առաջ Դավութօղլուի հայտարարած տարածաշրջանային «լուռ քաղաքականությանը»:

Ինչ վերաբերում է Սերդյուկովի Բաքվում ունեցած հանդիպումներին, ապա Իլհամ Ալիեւի հետ կայացած հանդիպումից հետո վերջինս հայտարարել է, թե ինքը հույս ունի, որ ՌԴ պաշտպանության նախարարի այցը կամրապնդի ռազմական ոլորտում երկու երկրների համագործակցությունը. «Ես հույս ունեմ, որ Ձեր այցը նոր լիցք կհաղորդի ռուս-ադրբեջանական համագործակցությանը, այդ թվում նաեւ ռազմական ոլորտում», հայտարարել է Ալիեւը՝ չմոռանալով նշել, որ ինքը «մեծ բավականություն է ստացել՝ ներկա գտնվելով Մոսկվայում կազմակերպված հաղթանակի 65-ամյակի միջոցառմանը»:

Ադրբեջանի պաշտպանության նախարար **Սաֆար Աբիեւը** իր ռուս գործընկերոջը հայտնել է. «Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքները արդյունք չեն տալիս եւ կարգավորման ուղղությամբ տարվող բոլոր քայլերը կարող են բերել անկանխատեսելի հետեւանքների»:

Այնուամենայնիվ հակասություններով, զավեշտներով, թյուրիմացություններով լի երկիր է Ադրբեջանը. երկրի նախագահը գոհ է Մինսկի խմբից, նրա առաջարկություններից, իսկ պաշտպանության նախարարը միջնորդական ջանքերը համարում է ապարդյուն: Եթե երկրի ներսում ադրբեջանական քաղաքական վերնախավը չի կարողանում համաձայնության գալ, ապա ինչպե՞ս կարող է հասնել դրան այլ երկրների հետ:

Հ. ԱՓՅԱՆ

# Եվրոմիության հետ Հայաստանի հարաբերությունների խորացման դրսեւորում

«Ես ողջունում եմ մայիսի 10-ին ԵՄ ընդհանուր գործերի խորհրդի կողմից Եվրոմիության եւ Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի միջեւ ասոցիատիվ համաձայնագրի բանակցությունների դիրեկտիվների ընդունման առնչությամբ», պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ երեկ հայտարարել է ԵՄ արտաքին հարաբերությունների եւ անվտանգության քաղաքականության գերագույն ներկայացուցիչ, Եվրոհանձնաժողովի փոխնախագահ Քաթրին Էշթընը:

Բանակցային այս դիրեկտիվների ընդունումը, ըստ Էշթընի, հստակ նշան է Եվրոմիության ու հարավկովկասյան երկրների հարաբերությունների հետագա խորացման ԵՄ պարտավորվածության առումով՝ «համատեղ արժեքների ու սկզբունքների, այդ թվում՝ ժողովրդավարության, օրենքի գերակայության եւ մարդու իրավունքների հարգման հիման վրա»:

«Արեւելյան գործընկերությունը, որ մեկնարկեց 2009 թ. մայիսի 7-ին Պրահայի գագաթաժողովում, հավակնոտ շրջանակների մեջ է դնում Հարավային Կովկասի երկրների հետ մեր հարաբերությունների տեղափոխումը նոր մակարդակ», ասել է Քաթրին Էշթընը: Այս համատեքստում ասոցիատիվ համաձայնագրերը կարեւոր գործիք են՝ զարգացնելու առկա պարտավորություններով հարաբերությունները Եվրոմիության հետ քաղաքական միավորման, տնտեսական աճող ինտեգրման վիզային ռեժիմի մեղմացման տեսանկյունից:

Եվրոհանձնաժողովի փոխնախագահի ներկայացմամբ, Արեւելյան գործընկերության ծրագրի հաջող իրականացումը կամրապնդի ԵՄ-ի հետ հարաբերությունները՝ քաղաքական եւ տնտեսական բարեփոխումների, կառավարման համախմբման եւ տարածաշրջանային կայունության, բարգավաճման ու վստահության ամրապնդման հիմքով: «Ես սպասում եմ Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի հետ այս բազմակողմանի եւ հավակնոտ համաձայնագրերի բանակցությունների մեկնարկին», հայտարարել է Քաթրին Էշթընը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# 70 հայեր ընտրվել են լիբանանյան տեղական իշխանական մարմիններում

Լիբանանում այս օրերին ընթանում են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Ինչպես տեղեկացնում է Բեյրութի հայկական թերթերից «Ազդակ»-ը, արդեն ավարտվել են ընտրությունները Լեռնալիբանանի, Բեյրութի եւ Բեքաայի շրջաններում, 70 հայեր ընտրվել են քաղաքապետի, փոխքաղաքապետի, քաղաքապետական խորհրդի եւ թաղապետների պաշտոններում: Նման արդյունքի հնարավոր է եղել հասնել ընտրություններում հայկական քաղաքական ուժերի համախմբման շնորհիվ: Բեյրութում, օրինակ, հայկական երեք ավանդական կուսակցությունները միասնաբար քվեարկել են բոլոր հայ թեկնածուների օգտին: ՀՅԴ-ն, ՌԱԿ-ը, ինչպես նաեւ ՍԴՀԿ-ն ունեցան մեկական թաղապետ Բեյրութում, ՍԴՀԿ-ն, բացի սրանից, ներկայացված է նաեւ Բեյրութի քաղաքապետական խորհրդում:

Ազգությամբ հայ են Բուրջ Համուդի, Այնճարի նոր քաղաքապետները, Անթիլիասի հարակից ավաններից մեկի փոխքաղաքապետը նույնպես հայ է:

Նման արդյունքը ամբողջ Սփյուռքում եզակի երեւույթ է, բայց միեւնույն ժամանակ տարօրինակ ոչինչ չկա, քանի որ Լիբանանի հայ համայնքը, ի տարբերություն այլ երկրների համայնքների, իր անմիջական մասնակցությունն է ունեցել Լիբանանի պետության ստեղծման ու կազմավորման գործում:

Հ. Ա.

AZG NEW PDF.qxd 11/05/2010 20:45 Page 1



# Վանի հերոսամարտը

*1-ին էջից*

Արեւմտյան Հայաստանում եւ Օսմանյան կայսրության հայաշատ մյուս վայրերում թուրքերի սկսած աննախադեպ ու վայրենի տեղահանությունները ու մասսայական կոտորածները ներառեցին նաեւ Վասպուրական աշխարհն ու նրա մայրանիստ Վանը: Արեւմտահայ ինքնապաշտպանական կռիվների խիստ ցանկալի, անհրաժեշտ, պատվաբեր ու բացառիկ զարդապսակը՝ հատկապես արդյունավետության տեսակետից, Վան-Վասպուրականի 1915թ. իսկապես հերոսական ինքնապաշտպանությունն էր:[1] Հերոսամարտի նախօրյակին Վանն ուներ 41000 բնակիչ, որոնցից 23000-ը հայ, իսկ 18000-ը մահմեդականներ էին, իսկ քաղաքի Այգեստան թաղամասն ուներ 20000 բնակիչ, որոնք հիմնականում հայեր էին:[2]

Դեպքերը Վանում կտրուկ կերպով սկսում են զարգանալ 1915թ. ապրիլի սկզբներից: Վանի նորանշանակ կուսակալ Ջեւդեթ բեյը հրամայում է քաղաքի հայկական թաղամասերը՝ Այգեստանն ու Քաղաքամեջը զորքերով շրջապատել եւ սպառնում է հաշվեհարդար տեսնել Վանի հայության հետ, եթե նրանք շարունակեն չենթարկվել ու չկատարեն իր բոլոր հրամանները: Հայերը հույսեր էին փայփայում, որ կհաջողվի խուսափել բախումից: Ստեղծված օրհասական վիճակը հայությանը հարկադրում է ուղիներ փնտրել՝ ջարդից խուսափելու համար: Ապրիլի 5-ից քաղաքի արվարձաններում բնակվող հայկական ընտանիքները տեղափոխվում են Այգեստան: Ապրիլի 4-ից խզվում է կապը Այգեստանի եւ Քաղաքամեջի միջեւ:

Հայերը հույս ունեին խուսափել մահաբեր բախումից: Նրանք փորձեցին ամերիկյան միսիոներ Ք. Աշըրի միջնորդությամբ բանակցելով լուծել հակասությունները: Սակայն՝ ապարդյուն: Ավելին, Ջեւդեթը հայերին ոչ միայն ամբաստանում է չեղած խռովության մեջ, այլեւ սպառնում. «եթե հայերը մի կրակոց արձակեն... ես քաղաքը կոչնչացնեմ, չթողնելով իմ ծնկից բարձր երեխա»:[3] Անարդյունք բանակցություններից հիասթափված Աշըրը հայերին խորհուրդ է տալիս, ասելով. «Ձեզի կը մնա պաշտպանել ձեր կեանքը, վասնզի հույս վերջացած է...»:[4] Սպառելով բոլոր միջոցները եւ մի կողմ թողնելով կուսակցական տարաձայնությունները, վանեցիները որոշում են համախմբվել եւ դիմել ինքնապաշտպանության:

Ապրիլի 5-ին ստեղծվում է Վանի հայ ինքնապաշտպանության Զինվորական մարմին, որի ղեկավարն էր հայ ժողովրդի պանծալի զավակ, ռամկավար (նախկին արմենական) Արմենակ Եկարյանը, անդամներ էին Կայծակ Առաքելը (Աբաջյան Տիգրան), Բուլղարացի Գրիգորը (երկուսն էլ դաշնակցական), որոնց մի փոքր ուշ միացան Փանոս Թերլեմեզյանը եւ Արամ Մանուկյանը:

Ինքնապաշտպանության ընդհանուր ղեկավարությունն իրականացրել է Արամ Մանուկյանը, նրան օժանդակել են բոլորը, կուսակցական նախկին անհանդուրժողականությունը տեղի էր տվել համերաշխությանը, ինչը միշտ երազել էր հայը: Զինվորական մարմնին կից ստեղծվում են նաեւ այլ ստորաբաժանումներ, որոնք կոչված էին ապահովելու հաջող ինքնապաշտպանությունը: Կազմվում է «Ամրաշեն խումբ», որտեղ ընդգրկվում են մոտ 18000 անզեն տղամարդիկ, որոնք հիմնականում գյուղերից Այգեստանում ապաստանածներն էին: Այս խումբը կառուցում է պաշտպանական ամրություններ եւ մարտերի ընթացքում ամենաշատ զոհեր նրանք են տալիս, որովհետեւ երբեմն թշնամու կրակի տակ էին կառուցում ու վերականգնում ամրությունները, խրամատներ փորում եւ ապահովում կռվողների պաշտպանությունը: «Օժանդակ մարմինը» իրականացնում էր կապը Զինվորական մարմնի եւ դիրքերի միջեւ: «Հայթհայթիչ հանձնաժողովը» տնօրինում էր սննդամթերքի ձեռքբերման եւ բաշխելու գործը: Խիստ կարեւոր էր զինամթերքի պատրաստման եւ վերանորոգման արհեստանոցի կազմակերպումը, որտեղ ընդգրկված էին 50-ից ավելի արհեստավորներ: Զինվորական մարմնի հրամանները, հայտարարությունները եւ կոչերը ժողովրդին հասցնելու համար ստեղծվում է «Տեղեկատու դիվան»: Ներքին կարգն ու կանոնը վերահսկելու համար կազմակերպվում են ոստիկանություն եւ դատարան: Մարտիկներին ու ողջ ժողովրդին անասելի ոգեւորում էր հատուկ այդ նպատակով ստեղծված «Ֆանֆառը»՝ դպրոցական նվագախումբը: Ի պատիվ վանեցիների, նշենք, որ այս ամենն ստեղծվում է ընդամենը երեք օրվա ընթացքում: Թաղամասի սանիտարական վիճակը եւ առողջապահությունը կազմակերպում է քաղաքապետարանը: Քաղաքապետն էր Պետրոս Մոզոյանը, իսկ օգնականները՝ Խաչիկ Ձենոբյանը եւ Ղեւոնդ Խանջյանը (Աղասի Խանջյանի հայրը, արմենական-ռամկավար):

Այգեստանը բաժանվում է յոթ ինքնապաշտպանական շրջանների՝ 79 դիրքով: Հայ մարտիկների թիվը 1053 էր, իսկ զենքի քանակը՝ 505 հրացան եւ 549 ատրճանակ: Հակառակորդի ուժերը մոտ 12000 զինվոր էր, գումարած թուրք խուժանն ու քուրդ պատեհապաշտ հրոսակները:[5]

Ապրիլի 5-ին Զինվորական մարմինը հատուկ շրջաբերականով հայտնում է, որ իրենց կռիվը պաշտպանողական է, եւ բոլորը պարտավոր են ենթարկվել իրենց հրահանգներին: Այնուհետեւ պաշտպանության ամբողջ ընթացքում ընդունվեցին էլի մի շարք շրջաբերականներ, որոնցով, փաստորեն, Զինվորական մարմինն իրականացնում էր թե՛ գործադիր, թե՛ օրենսդիր իշխանության գործառույթներ:

***

1915 թ. Վանի հերոսական ինքնապաշտպանությունն սկսելու առիթ է ծառայում ապրիլի 7-ի միջադեպը: Շուշանց գյուղից Այգեստան վերադարձող կանանց վրա թուրք զինվորներ են հարձակվում, որոնց պաշտպանելիս զոհվում են երկու հայ երիտասարդներ, եւ հայերն ստիպված պատասխան կրակ են բացում: Թուրքական հրետանին սկսում է ռմբակոծել Այգեստանը: Կենաց ու մահու կռիվն սկսված էր:



*Արմենակ Եկարյան*
*Վանի զինվորական մարմնի ղեկավար*

Ապրիլի 7-ին Զինվորական մարմինը կոչով դիմում է թուրք ազգաբնակչությանը եւ պարզաբանում հայերի ինքնապաշտպանության դրդապատճառները, ընդգծելով, որ վալիները կգան ու կգնան, իսկ մենք ապրելու ենք միասին, մենք թշնամիներ չենք, մեզ արհեստականորեն թշնամացնում են կառավարիչները:

Վանի հերոսամարտի մասին շատ է գրվել եւ, կարծես, բոլոր մանրամասները հայտնի են: Առկա են նաեւ բազմաթիվ տարաբնույթ եւ իրարամերժ գնահատականներ, որոնցով լի են հատկապես կուսակցական հուշագիրների ու պատմագիրների երկերը: Սակայն հստակ է մի բան, որն ընդունում են բոլորը. ինքնապաշտպանությունն իրականացվել է Արամ Մանուկյանի եւ Արմենակ Եկարյանի ընդհանուր ղեկավարությամբ: Նրանք եւ իրենց զինակիցները եղան ինքնապաշտպանության հիմնական կազմակերպիչներն ու ոգեշնչողները, ինչի մասին կան բազմաթիվ վկայություններ: Նրանց օժանդակել են բոլորը՝ առանց խտրականության եւ, որ ամենակարեւորն է, անկախ իրենց կուսակցական պատկանելությունից:

Ինքնապաշտպանության մանրամասն նկարագրությունը մեր խնդիրը չենք համարում: Կռվի ողջ ընթացքում հերոսական դրվագները հաջորդում էին մեկը մյուսին, որոնց մասին առկա են ինչպես հայ, այնպես էլ օտարազգի ականատեսների եւ ուսումնասիրողների բազմաթիվ վկայություններ:[6] Ընդ որում, հերոսանում էին ոչ միայն կռվող մարտիկները, այլեւ բոլորն անխտիր՝ յուրաքանչյուրն իր ասպարեզում:

Չնայած հայերի հերոսական ջանքերին՝ իրադրությունն օրեցօր ավելի սպառնալի էր դառնում: Թուրքերն անընդհատ օգնական ուժեր էին ստանում, իսկ հայերի զինամթերքը սպառվում էր: Այգեստանի բնակչությունից բացի հարկավոր էր կերակրել 55000-ից ավելի գաղթականությանը: Ելնելով սրանից՝ Զինվորական մարմինը ռուսական բանակին ընդառաջ պատգամախոսներ է ուղարկում, շտապ օգնության խնդրանքով: Տեղ են հասնում նրանցից միայն երեքը:[7]

Այգեստանում շարունակվում էին կատաղի մարտերը: Անզորությունից ու հայերի հերոսական դիմադրությունից կատաղած թշնամին քաղաքի վրա օրական 300-400 ռումբ էր արձակում, ձեռնարկում մեկը մյուսից կատաղի գրոհներ: Սակայն միակամ ու բռունցք դարձած հայերը դիմադրում էին՝ ամեն անգամ ցույց տալով իրար գերազանցող հերոսացման դրվագներ: Օրօրի թուրքերի ճնշումն անտանելի էր դառնում, չէր բավարարում զինամթերքը, սկսել էր զգալի դառնալ սննդի պակասը: Ապրիլի 15-ին Վանից նոր սուրհանդակներ են ուղարկվում գործող ռուսական բանակ՝ օր առաջ օգնության հասնելու խնդրանքով:

Այդ ընթացքում Ջեւդեթը, տեսնելով որ զենքի ուժով չի կարողանում ծնկի բերել հայերին, փորձում է դիմել խորամանկության: Ապրիլի 21-ին երկու հայ կանանց միջոցով նամակ է ուղարկում Զիվորական մարմնին, որով խոստանում էր կյանքի ու գույքի ապահովություն՝ զենքը վայր դնելու եւ հանձնվելու դեպքում: Հայերը, շատ լավ ճանաչելով թշնամուն, մերժում են, բայց եւ նամակի բովանդակությունից հասկանում են, որ ռուսական բանակը հաղթարշավ առաջ է շարժվում: Մերժված Ջեւդեթն ամբողջ ուժով նետվում է գրոհի. «...Ապրիլի 21-ի կռիվները իրենց կատաղութեամբ ոչ նախընթաց ունեին եւ ոչ ալ այլեւս կրկնվեցին»:[8] Համառ մարտերը շարունակվում են մինչեւ ապրիլի 28-ը: Իսկ ապրիլի 29-30-ը խաղաղ է անցնում:

Հետագայում՝ հատկապես մայիսի 3-ի ցերեկը, թեեւ թուրքերը կատաղի ռմբակոծում են Այգեստանը, սակայն երեկոյան թողնում են Վանը: Շուտով քաղաք են մտնում ռուսական բանակի առաջամարտիկ հայ կամավորական ջոկատները: Քաղաքը փրկված էր: Հայերը գրկում, համբուրում են միմյանց, հարցնելով. «Ասիկա երա՞զ է, թե՞ իրականութիւն...»:[9]

Վանի հերոսամարտը տեւում է ապրիլի 6-ից մինչեւ մայիսի 3-ը, երբ Ջեւդեթը դիմեց փախուստի, եւ Վան մտան հայ կամավորականները:

Վերջում կուզենայինք հայտնել որոշ նկատառումներ.

1. Նախ արձանագրենք, որ 1915 թ. Վանի ապրիլյան հերոսամարտը միակն էր արեւմտահայ ինքնապաշտպանական կռիվներից, որն իսկապես տվեց ցանկալի արդյունքը՝ իրական ոչնչացումից փրկվեց արեւմտահայ ժողովրդի 150 հազարից ավելի հատվածը:

2. 1915 թ. Վանն ուներ արմենականների ղեկավարած 1896 թ. «Մեծ դեպք» անվանված ինքնապաշտպանության ուսանելի եւ խիստ հուսադրող ու ոգեւորող փորձը: 96-ի շատ մասնակիցներ կռվում ու քաջալերում էին նաեւ 1915 թ. հերոսամարտի ժամանակ:

3. Ամբողջ ինքնապաշտպանության ընթացքում Վանում առկա էր կուսակցական իրատեսական համերաշխություն, իսպառ բացակայում էին կուսակցամոլությունն ու դրա անցանկալի ազդեցությունը: Իսկ մեր պատմության ողջ ընթացքում, երբ համակարծիք ու միաբան ենք եղել, որպես կանոն՝ միշտ հաղթել ենք:

4. Վանի պաշտպանները նախապես ապավինեցին սեփական ուժին: Ճիշտ է, ռուսական բանակի օգնությունն ակնկալվում էր, սակայն նախ եւ առաջ հույսն իրենք իրենց վրա դրեցին:

5. Ինքնապաշտպանության ղեկավարությունն իրականացնում էին Արամ Մանուկյանի եւ Արմենակ Եկարյանի նման քաջակորով, անվախ, խելացի ու հաշվենկատ գործիչները: Հրամանատարներ՝ ովքեր ի վիճակի են պատմություն կերտել: Իսկապես, Արամ գործիչի եւ Եկարյան հրամանատարի ընդհանուր նկարագիրը մեծ դերակատարություն ունեցավ հաղթանակը կռելու գործում:

Նրանք լավ էին ըմբռնում, հասկանում արեւմտահայության ցավը եւ փայլուն պատկերացնում ամենագլխավոր խնդիրը՝ ինքնապաշտպանվել նախ ֆիզիկական գոյությունը պահպանելու, ապա ազատություն նվաճելու համար:

Չէին վստահում մեծ տերությունների տված շռայլ խոստումներին, այլ ապավինեցին սեփական բազկին՝ նախապես կրթելով ու զինավարժելով ժողովրդին:

Արմենականների նման խոհեմ գործելակերպի կողմնակից էին երկուսն էլ եւ մերժում էին ցուցադրական գործողությունները:

Կողմնակից էին խաղաղ պայմաններում ավելորդ առիթներով չգրգռելու թուրքերին, այսինքն՝ խաղաղ գոյակցության ջատագովներ էին: Սակայն մշտապես պահանջում էին բոլորից նաեւ աչալուրջ լինել: Նրանք այն քիչ իրատեսներից էին, որոնք լավ հասկացան 1908 թ. հեղաշրջման բերած սահմանադրության իրական արժեքը, եւ որ թուրքերի առաջարկած բարեկամությունը ժամանակավոր ու խաբուսիկ է:

Դեմ էին կամավորական շարժմանը, որովհետեւ դա, նրանց կարծիքով, գազազեցնում էր թուրքերին, որոնք նախապես մշակված ծրագիր ունենալով, առիթ էին փնտրում ջարդերի միջոցով մեկընդմիշտ փակելու Հայկական հարցը:

Վճռական պահերին հեռու մնացին կուսակցական ցավագարությունից: Թեեւ Զինվորական մարմինը ղեկավարում էր փառապանծ ու վեհանձն Արմենակ Եկարյանը, որը ռամկավար էր, դաշնակցական, հնչակյան ու ոչ կուսակցականներ էլ շատ կային ինքնապաշտպանության ղեկավար մարմնում, որոնք կատարում էին ամենակարեւոր ֆունկցիաներ, սակայն դա ամենեւին չէր խանգարում, որ նրանք համատեղ ու միակամ պայքարեն անարգ թշնամու դեմ: Այս ամենն էլ ամենադրական արդյունքն էր տալիս՝ ժողովուրդն ու շարքերը ներդաշնակ համերաշխությամբ եւ իրենց հերոսական քաջագործություններով միահամուռ կռում էին բաղձալի հաղթանակը:

Ուզում եմ ընդգծել նաեւ մի կարեւոր հանգամանք: Մեր օրերի ազատությունը հնարավորություն է ընձեռում գրելու ամեն ինչի ու բոլորի մասին: Չկան արգելված թեմաներ: Սակայն երբեմն գրվում են նախադասություններ, օգտագործվում են մակդիրներ, որոնք չեն համապատասխանում իրականությանը: Կամ մեծարվում, փառաբանվում են գործիչներ, իսկ նրանց կողքին ոչ պակաս հերոսացած նվիրյալներ մոռացության մատնվում: Կարծում եմ, ժամանակն է բոլորի նկատմամբ լինելու ուշադիր եւ տուրք չտալու կուսակցականությանը: Համոզված եմ նաեւ, որ սա այն դեպքն է, երբ ով էլ գրիչ վերցնի հերոսամարտի մասին գրելու, մեծարանքի, գնահատանքի ու փառաբանման խոսքերից բացի ոչինչ չի գրի: Իսկապես լավ է ասված. «...Ամբողջ ժողովուրդի մը համար ստեղծվեց նոր պատմութիւն եւ կեանքի կոչվեց ու իրականացուց մեր հայրենիքի աւերակներուն վրայ 500 տարիներէ ի վեր թափառական ու անհանգիստ երազը»:[10] Մեծ երազը, որը իրականություն դարձավ, առարկայացավ, երբ կերտվեց Ազատ եւ Անկախ Հայաստանը:

---

1. Որոշ վերապահումներով դրական վերջաբան ունեցավ նաեւ Մուսա լեռան ինքնապաշտպանությունը: Սակայն, եթե հաշվի առնենք մասշտաբներն ու հայրենի հողի վրա մնալու հանգամանքը, ապա իսկապես Վանի ինքնապաշտպանությունը համամատնությունից դուրս է եւ բացառիկ:
2. Վան-Վասպուրականի հերոսամարտը, ժողովածու, կազմեց Հ. Դ. Փափազյան, Ե., 1990, էջ 45:
3. Knapp G. H., The Tragety of Bitlis, Being Majnli the Narratives of Grisel M. Mc Laren and Myrtel O. Shane, N. Y., 1919:
4. Մխիթարյան Օ., Վանի հերոսամարտը, Սոֆիա, 1960, էջ 50:
5. Սահակյան Ռ., Արեւմտահայության ցեղասպանությունը եւ ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Ե., 2005, էջ 193:
6. Հոդվածը չծանրաբեռնելու համար նշենք միայն մի քանիսին՝ Արմենակ Եկարյան, Փանոս Թերլեմեզյան, Օնիկ Մխիթարյան, Ա-Դո, Knapp G. H., Usser C. D., Nogales R. de, Lepsius I. Oh., Barrows J. O., Bryce J.:
7. «Մշակ», 1915, 2 մայիսի:
8. Մխիթարյան Օ., նշվ. աշխ., էջ 146:
9. «Վան-Տոսպ», 1916, ապրիլի 28, թիվ 22-23, էջ 25:
10. «Արամը: Մահուան յիսնամեակին առթիւ», Երեւան, 1991, էջ 154:

**ՍՈՒՐԵՆ ԹԱՐԽԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ**
**Պատմական գիտությունների թեկնածու**

AZG NEW PDF.qxd 11/05/2010 20:45 Page 1



# Մայիսի 19 Պոնտոսի հույների ցեղասպանության զոհերի հիշատակման միջազգային օրն է

Այդ մասին մայիսի 6-ին տեղեկացրել էր Նյու Յորքի «Թուրքական հանդես» կայքէջը: Քեմալական ազգայնականության խոսափող այս հանդեսի կարծիքով, հույները, հռչակելով մայիսի 19 ցեղասպանության զոհերի հիշատակման օր, նպատակադրվել են ոտնձգություններ կատարել ոչ միայն Թուրքիայի, այլեւ նրա հիմնադիր նախագահ Քեմալ Աթաթուրքի դեմ:

Ինչո՞ւ. այն պարզ պատճառով, որ քեմալականների, այսպես կոչված, ազատագրության պայքարի սկիզբը դրվել է 1919-ի մայիսի 19-ին, երբ Սեւ ծովի առափնյա Սամսուն քաղաքում ափ էր իջել Մուստաֆա Քեմալը: Այս օրը Թուրքիայում նշվում է երիտասարդության եւ սպորտի տոնը: Այլ կերպ, հույները Թուրքիայի դեմ կրկնակի դավադրություն են նյութում. նախ՝ արտահայտվելով ցեղասպանության մասին, ապա՝ հիշատակելով զոհերին երկրում պետական օր հայտարարված մայիսի 19-ին, որը թուրք երիտասարդությանն էր նվիրել Քեմալ Աթաթուրքը:

Ի դեպ, Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի անխտիր բոլոր զինակիցները հայ ազգի արյունարբու դահիճներն էին: «Ազատագրության պայքարի» տարիներին եթե նա իրեն շրջապատել էր իթթիհատական դահիճներով, «Թեշքիլաթ-ը Մահսուսայի» մարդասպան տականքներով, տրամաբանական է, որ քեմալական ազգայնականության ջատագով հանդեսն էլ ապրիլի 24-ը պիտի վերագրի Թուրքիայի դեմ հայերի, իսկ մայիսի 19՝ հույների դավադրության:

Ըստ այս հանդեսի, որքան էլ Օսմանյան կայսրության հոգեվարքի տարիներին, երբ թուրքերը մահու եւ կենաց պայքար էին մղում, տանջված լինեն նաեւ առանձին էթնիկ խմբեր, այդ թվում՝ հայերը, գուցեեւ հույները, այնուամենայնիվ, վերջիններս մինչ այդ շատ ավելի մեծ տանջանքներ էին պատճառել թուրքերին, հետեւաբար Հայոց ցեղասպանությունը ոչ այլ ինչ է, քան որոշակի իրադարձություններն իբրեւ ցեղասպանություն ներկայացնելու հայերի չարանենգ դրսեւորում, Թուրքիայի անտարբերության պատճառով նրանք կարողացել են 1915-ի իրադարձությունները բարձրացնել Հոլոքոստի հետ նույն հարթության վրա, իսկ դա բացել է այլ էթնիկ խմբավորումների ախորժակը, որոնցից են Պոնտոսի հույները:

Այնուհետեւ Նյու Յորքի թուրքական հանդեսը ավելացնում է. «Շուրջ հարյուր տարի շարունակ Օսմանյան կայսրությանը ոչնչացնելու նպատակով զինվող այս էթնիկ խմբավորումները, ցավոք, այսօր կարողանում են ցուցաբերել իրենց կորուստները ցեղասպանություն որակելու աներեսությունը: Այդ իսկ պատճառով նման զարգացումներում չենք կարող չարանենգություն չտեսնել: Նյու Յորքի հունական որոշ շրջանակներ հայտարարեցին մայիսի 19 իբրեւ Պոնտոսի հույների այսպես կոչված ցեղասպանության զոհերի հիշատակման միջազգային օր նշելու իրենց պատրաստակամության մասին: Սամսունում Աթաթուրքի ափ իջած այդ օրը ԱՄՆ-ում թուրքերի հետ համատեղ գոյակցող հույն երիտասարդ սերունդը, որոնց պապերն էլ օսմանյան հողերում թուրքերի հետ էին գոյակցում, թշնամանքի սերմեր են ցանելու աշխարհով մեկ: Եվ այս ամենը կատարվելու է Կանադայի եւ ԱՄՆ-ի համապոնտական հելլենական միությունների ֆեդերացիայի հովանու ներքո»:

Հ. Չ.

# Բրաունը կթողնի լեյբորիստների առաջնորդի պաշտոնը

Մեծ Բրիտանիայի վարչապետ Գորդոն Բրաունը հայտարարել է, որ մտադիր է մինչեւ սեպտեմբեր թողնել Լեյբորիստական կուսակցության առաջնորդի պաշտոնը: Սեպտեմբերին տեղի կունենա լեյբորիստների ամենամյա կուսակցական կոնֆերանսը, նշում է Ֆրանսպրես գործակալությունը:



Բրաունի խոսքերով, ինքը կուսակցությանը կխնդրի նոր առաջնորդի ընտրության արարողակարգ սկսել, բայց ինքը չի մասնակցի ընտրություններին: Վարչապետը նաեւ մտադիր է Լիբերալ-դեմոկրատական կուսակցության հետ բանակցել երկրի նոր կառավարության ձեւավորման շուրջը: Ներկայումս լիբերալ-դեմոկրատները տվյալ թեման արդեն քննարկում են մայիսի 6-ի ընտրություններում առավելության հասած Պահպանողական կուսակցության ներկայացուցիչների հետ:

Լեյբորիստները լիբերալ-դեմոկրատներին առաջարկում են հանրաքվե անցկացնել Մեծ Բրիտանիայի ընտրական համակարգի փոփոխման հարցի առթիվ: Լիբերալ-դեմոկրատների առաջնորդ Նիկ Քլեգը լեյբորիստների նախաձեռնությունը համարում է բանակցությունների «կարեւոր տարր»:

Մայիսի 6-ի ընդհանուր ընտրություններում բրիտանական երեք կուսակցություններից ոչ մեկը բացարձակ մեծամասնություն չստացավ խորհրդարանի Համայնքների պալատում, սակայն պահպանողականները առավելության հասնելով՝ վերջ դրեցին լեյբորիստների 13-ամյա իշխանությանը: Լեյբորիստները 2-րդ տեղում են: Կոալիցիոն կառավարություն կազմելու համար էական է, թե լիբերալ-դեմոկրատները ում հետ դաշինք կկնքեն: Եթե չհաջողվի կառավարություն կազմել, ապա խորհրդարանը կարձակվի:

# Սոմալեցիները ԱՄՆ-ին մեղադրում են ահաբեկչությունների մեջ

Սոմալիի մայրաքաղաքի մզկիթներում ահաբեկչությունները կազմակերպել են «ամերիկյան իշխանությունները», պնդում է «Ալ Շաբաբ» արմատական իսլամիստական խմբավորման առաջնորդ Ֆուադ Շոնգոլեն, որը վիրավորվել է մայիսմեկյան պայթյուններից մեկի ժամանակ:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը մեջբերում է Շոնգոլեի հետեւյալ հայտարարությունը. «Մայիսի 1-ին իրականացված եւ առնվազն 40 կյանք խլած երկու ահաբեկչությունները կազմակերպել է ԱՄՆ-ը: Իրաքում եւ Աֆղանստանում մահմեդականների դեմ մղվող պատերազմներում պարտվելուց հետո ամերիկացիները տեղափոխվել են Սոմալի, որտեղ հիմա պայթեցումներ են կազմակերպում մզկիթներում եւ խտաբնակ մահմեդական շրջաններում»:

«Մենք դա անուշադրության չենք մատնի եւ նախազգուշացնում ենք, որ ԱՄՆ-ը եւ նրա դաշնակիցները դաժանորեն կպատժվեն այդ միջադեպերի համար», ընդգծել է Շոնգոլեն, որը գլխավորում է խմբավորման զորահավաքի բաժանմունքը:

Ոչ ոք պատասխանատվություն չի ստանձնել Բակարա շուկայի շրջանի մզկիթներում իրականացված ահաբեկչությունների համար: Այդ շրջանը համարվում է «Ալ Շաբաբի» հենակետը:

Ֆուադ Շոնգոլեն պայթյուններից մեկի ժամանակ մզկիթում ելույթ էր ունենում շարժման նորակոչիկների առջեւ: Զոհերի մեջ կան «Ալ Շաբաբի» երկու բարձրաստիճան հրամանատարներ:

# Մազ եւ բուրդ՝ ընդդեմ նավթի

**Ամբողջ աշխարհում վարսավիրները, բուրդ խուզողները եւ շների սալոնների տերերը մազեր եւ բուրդ են հավաքում Մեքսիկական ծոցում վթարված նավթահարթակից նավթի աղետալի տարածումը ինչ-որ չափով կասեցնելու նպատակով: BBC-ն հաղորդում է, որ խտացված մազերից եւ բրդից պատրաստում են խոշոր «երշիկներ», որոնք կոչված են ներծծելու Լուիզիանայի նահանգի ափերի մոտ օրեր առաջ պայթած նավթահորից առատորեն հոսող թանձր նավթը:**

**Մազահումքի հավաքումը կազմակերպել է Matter of Trust բարեգործական ընկերությունը: Աշխարհի 370 հազար սալոններից ամեն օր ստացվում են ավելի քան 200 տոննա մազ եւ բուրդ: Մազերը չափազանց արդյունավետ նյութ են ամեն տեսակի յուղային նյութերի, այդ թվում՝ նավթի հավաքման համար:**

**Կամավորները մազով ու բրդով լցնում են զուգագուլպաներ աղետի վայրից ոչ հեռու գտնվող 15 պահեստներում: Այդ «երշիկները» կդրվեն ափի երկայնքով, որպեսզի ներծծեն ափերին մոտեցող նավթը: Մազ եւ բուրդ ուղարկում են Ֆրանսիայից, Անգլիայից, Իտալիայից, Բրազիլիայից, Ավստրալիայից, Կանադայից եւ ԱՄՆ-ից:**

**Վթարված նավթահարթակը պատկանում է «Բրիտիշ փեթրոլիում» ընկերությանը, որը պարտավոր է վճարել վթարի հետեւանքների վերացման բոլոր ծախսերը: Վերջին տեղեկությունների համաձայն, ընկերությունը մտադիր է ստորջրյա նավթահորը փակել այնտեղ գոլֆի գնդակներ եւ ավտոդողեր խցկելով: Նավթի հոսքը կանգնեցնելու մյուս տարբերակներն արդյունք չեն տվել:**

ՄԵԴՎԵԴԵՎԻ ԴԱՄԱՍԿՈՍ ԱՅՑԻՑ ՀԵՏՈ

# Ռուսաստանի եւ Սիրիայի նախագահների համատեղ հայտարարությունը

**«Ռուսաստանը եւ Սիրիան խորապես անհանգստացած են Մերձավոր Արեւելքում տիրող վտանգավոր լարվածությունից եւ դատապարտում են Իսրայելի ակտիվ բնակեցման քաղաքականությունը»: Այդ մասին ասված է ՌԴ-ի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի եւ Սիրիայի նախագահ Բաշար Ասադի համատեղ հայտարարության մեջ, որն ընդունվել է երեկ: «Կողմերը խորին անհանգստություն են հայտնում Մերձավոր Արեւելքում վտանգավոր լարվածության պահպանման առնչությամբ՝ նախեւառաջ շարունակվող իսրայելական բռնազավթման հետեւանքով, դատապարտում են Իսրայելի ակտիվ բնակեցման քաղաքականությունը, բռնազավթված արաբական տարածքներին, այդ թվում՝ Արեւելյան Երուսաղեմին վերաբերող բոլոր միակողմանի գործողությունները», ընդգծվում է հայտարարության մեջ: Երկու երկրների նախագահները հանդես են եկել միջազգային իրավական հիմքի վրա այդ տարածաշրջանում համապարփակ եւ արդար խաղաղության հասնելու գործընթացի վերականգնման օգտին, ներառյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձեւերը, մադրիդյան սկզբունքները, այդ թվում՝ «Խաղաղություն հողի դիմաց» սկզբունքը, արաբական խաղաղ նախաձեռնությունը: «Ռուսաստանն ու Սիրիան հանդես են գալիս իրանական միջուկային հիմնախնդրի դիվանագիտական կարգավորման օգտին: Երկու երկրները մտադիր են կանոնավոր բնույթ հաղորդել երկու նախագահների փոխադարձ այցերին», ասված է ռուս-սիրիական համատեղ հայտարարության մեջ:**

# «Լուռ քաղաքականության» սկզբունքներով

**Մայիսի 6-ին Իսրայելում գտնվող Ադրբեջանի փոխարտգործնախարար Արազ Ազիմովը մի շարք հանդիպումներ ունեցավ: Ինչպես տեղեկացնում է IzRus գործակալությունը, Ազիմովն այցելել է Ամերիկա-իսրայելական կոմիտեի (AIPAC) երուսաղեմյան գրասենյակ եւ հանդիպել գրասենյակի հասարակայնության հետ կապերի վարչության ղեկավար Ուենդի Զինգերի, ինչպես նաեւ գլխավոր քարտուղար Դեյվիդ Թրեւելմանի հետ: Վերջինս վերոհիշյալ գործակալությանը հայտնել է, որ «Ազիմովի հետ ունեցած իրենց խոսակցությունը կրել է մասնավոր բնույթ եւ հրապարակման ենթակա չէ»: Թրեւելմանը նաեւ տեղեկացրել է, որ «նման հանդիպումներն այսուհետեւ կլինեն պարբերական»:**

**Ազիմովը Իսրայելում հանդիպել է նաեւ այդ երկրի արտաքին գերատեսչության ղեկավար Ավիգդոր Լիբերմանի եւ վերջինիս տեղակալ Դանի Այալոնի հետ:**

**Որոշ իսրայելական լրատվամիջոցների պնդմամբ՝ Ադրբեջանի փոխարտգործնախարարի հանդիպումներն ու «մասնավոր խոսակցությունները» Իսրայելում ունեցել են հետեւյալ բովանդակությունը: Բաքուն անհանգստացած լինելով հասկապես Միացյալ Նահանգներում հայկական լոբբիի ազդեցության մեծացումից, փորձում է իր կողմը գրավել ոչ պակաս ազդեցություն ունեցող հրեական կազմակերպություններին՝ «ԱՄՆ Սենատում եւ Կոնգրեսում առավել ադրբեջանամետ որոշումներ ընդունելու կապակցությամբ»: Որ Ադրբեջանն ունի ԱՄՆ-ում ադրբեջանամետ որոշումների ընդունման կարիք, հասկանալի է. նախ ԱՄՆ Կոնգրեսը նախորդ տարիներում պարբերաբար ֆինանսական օգնություն էր տրամադրում Հայաստանին եւ Ղարաբաղին, իսկ այս տարի էլ, հակառակ պաշտոնական Բաքվի բողոքի նոտաներին, որոշ կոնգրեսականների նախաձեռնությամբ Կոնգրեսը կքննարկի «հայկական օգնության» չափի մեծացման հարցը: Բացի տրանից, ամբողջ աշխարհում, հայկական կազմակերպությունների ջանքերով, ընկասվում է գործընթաց՝ միտված ԼՂՀ միջազգային ճանաչման ամրագրմանը: Իսրայելը, Ամերիկայի հրեական կազմակերպություններն, անշուշտ, կարող են որոշակի օգնություն ցուցաբերել Ադրբեջանին, սակայն Թել-Ավիվը նաեւ նկատում է, իհարկե, թե դեպի ո՞ւր եւ որքա՞ն «բարեկամական» են առաջ ընթանում Ադրբեջանի հարաբերությունները Իրանի հետ:**

Հ. Ա.

# Օբաման Կոնգրես է ուղարկել «խաղաղ ատոմի» ռուս-ամերիկյան համաձայնագիրը

**ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Կոնգրեսի քննարկման է ներկայացրել ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման ոլորտի ռուս-ամերիկյան համագործակցության համաձայնագիրը: Օբամայի որոշման մեջ նշվում է, որ նա հավանություն է տալիս փաստաթղթին՝ դրանում տեսնելով տվյալ ոլորտում համագործակցության զարգացման բացառապես դրական կողմեր:**

**Կոնգրեսականների հավանությունն ստանալու դեպքում համաձայնագիրը կմտնի ուժի մեջ, իսկ քվեարկության բացասական արդյունքը վետո կդնի փաստաթղթի վրա, նշում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**

**Կիրառվելու դեպքում համաձայնագիրը ռուսական եւ ամերիկյան ընկերություններին իրավաբանական հիմք կտա համատեղ էներգետիկ նախագծերի համար, ինչպես նաեւ ԱՄՆ-ին մատչելի կդարձնի խաղաղ ատոմի ռուսական տեխնոլոգիաները: Համաձայնագրի կարեւոր կետերից մեկն էլ Ռուսաստանում ԱՄՆ միջուկային թափոնների վերամշակման համալիրի ստեղծումն է: Համաձայնագրի հակառակորդները պնդում են, որ այդ կետը կարող է Ռուսաստանը դարձնել միջուկային թափոնների աղբանոց:**

**Տվյալ երկկողմ համաձայնագիրը ստորագրվել է 2008-ի մայիսին, բայց մինչեւ օրս չի հաստատվել: Նույն տարվա սեպտեմբերին նախագահ Ջորջ Բուշի վարչակազմը փաստաթուղթը հետ կանչեց Կոնգրեսից: Վարկածներից մեկի համաձայն՝ հետկանչը ԱՄՆ-ի պատասխանն էր վրաց-օսական հակամարտության մեջ Ռուսաստանի խաղացած դերին:**

# Իրանը փորձարկել է հակասուզանավային տորպեդ

**Իրանցիները փորձարկել են սեփական արտադրության փոքր հեռահարության տորպեդ: Իրանական հեռուստատեսության հաղորդումները վկայակոչելով՝ Ֆրանսպրեսը հաղորդում է, որ փորձարկումն անցկացվել է Պարսից ծոցում իրականացվող զորավարժանքների ընթացքում:**

**Ծովուժի ներկայացուցիչների խոսքերով, արձակումն իրագործվել է «Ջամարան» ֆրեգատից: Տորպեդը նախատեսված է սուզանավերի ոչնչացման համար եւ, ինչպես պնդում են զինվորականները, արձակումից հետո «ինքն է փնտրում սուզանավեր եւ ոչնչացնում դրանք»:**

**Իրանական ծովուժի խոշոր զորավարժությունները սկսվել են մայիսի 5-ին եւ պետք է տեւեն 8 օր: Դրանք անցկացվում են Պարսից ծոցում, Օմանի ծոցում եւ Հնդկական օվկիանոսում: Ապրիլի վերջերին համանման զորավարժանք անցկացվել էր Օրմուզի նեղուցում:**

AZG NEW PDF.qxd 11/05/2010 20:46 Page 1



*Որպես Կահիրեում (Եգիպտոս) հրատարակվող ՀԲԸՄ-ի «Տեղեկատու» պարբերականի 2009-2010 միացյալ 53-54 թվերի հավելված խմբագրությունը շնորհակալությամբ ստացել է ՀԲԸՄ Եգիպտոսի շրջանակային հանձնաժողովի ատենապետ Պերճ Թերզյանի «Ինչպէ՞ս տօնուեցաւ Հայ պարբերական մամուլի 200-ամեակը Գահիրէի մէջ» 24 էջանոց գրքույկը, որտեղ խիստ հետաքրքրական տեղեկություններ կան ընդհանրապես հայ եւ մասնավորապես սփյուռքահայ մամուլի պատմության համար կարեւոր այդ միջոցառման վերաբերյալ:*

# Պատմության համար

## 200-ամյա հայ պարբերական մամուլի արժանավայել նշումը Կահիրեում՝ 1994-ին

**«Ազգ»** օրաթերթի 2009 թվականի հոկտեմբերի 17-ի համարից տեղեկանալով, որ նախորդ օրը հայ անդրանիկ պարբերականի՝ «Ազդարարի» առաջին համարի լույս ընծայման 215-րդ ամյակի առթիվ հատուկ հանդիսություն է տեղի ունեցել Երեւանի պետհամալսարանի Չարենցի անվան դահլիճում, պարոն Թերզյանը գովելի մտահղացում է ունեցել անդրադառնալու հայ պարբերական մամուլի 200-ամյակի առթիվ Կահիրեում 1994-ին կազմակերպված ցուցահանդեսի կազմակերպչական աշխատանքներին, հաշվի առնելով, որ տեղի հայ մամուլը այդ ժամանակ շատ սեղմ տողերով է ներկայացրել հիշյալ կարեւոր իրադարձությունը:

Միջոցառման նախաձեռնողը եղել է եգիպտահայ մտավորական, ուսուցիչ եւ մատենագետ Տիգրան Գեւորգյանը, ով դեռեւս 1991-ի աշնանը մտահղացել է այդ գաղափարը եւ առաջարկել ՀԲԸՄ-ի տեղական մասնաճյուղին, որ «Հայ ազգային հիմնադրամի» («Արեւ» օրաթերթ) եւ «Յուսաբեր մշակութային ընկերակցության» («Յուսաբեր» օրաթերթ) միասնական ջանքերով կազմակերպվի սույն ձեռնարկը: Հետագայում այդ մարմիններին միացել են նաեւ «Հայկական ընթերցասրահը» («Ջահակիր» շաբաթաթերթ) եւ «Հայ մշակույթի բարեկամների մարմինը», որ համայնքի բոլոր հատվածները ներկայացնող կազմակերպություն է: Ձեռնարկի պատասխանատու անդամներ են նշանակվել դոկտ. Սուրեն Պայրամյանը (որ հեղինակն է «Հայ մամուլը Եգիպտոսի մէջ» 2005 թվի արժեքավոր աշխատության) եւ Տիգրան Գեւորգյանը: Կազմակերպիչ հանձնախմբի մյուս անդամներն են եղել Օննիկ Կարիպյանը, Պերճ Թերզյանը, Մարտիկ Պալայանը եւ Արաքսի Տյուվլեթյանը:

Ցուցահանդեսի առթիվ պատրաստվել է աշխարհի հսկայական քարտեզը, որի վրա նշվել են այն բոլոր քաղաքները, որտեղ հայերեն թերթեր են լույս տեսել: Պայրամյանի պատրաստած քարտեզից պարզվել է, որ աշխարհի 264 քաղաքներում հայերեն թերթ է հրատարակվել (անկախ այն քանակից, թե յուրաքանչյուր քաղաքում քանի թերթ է լույս տեսել), ընդ որում Հյուսիսային եւ Հարավային Ամերիկաներում՝ 59 քաղաք, Եվրոպայում՝ 61 քաղաք, Աֆրիկայում՝ 4 քաղաք, ԱՊՀ-ում՝ 72 քաղաք, Ասիայում՝ 66 քաղաք եւ Օվկիանիայի տարածքում՝ 2 քաղաք:


ՅԱՒԵԼՈՒԱԾ ԳԱՀԻՐԷԻ ՀԲԸՄ-Ի «ՏԵՂԵԿԱՏՈՒ» ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԻ

թիւ 53, Հոկտեմբեր 2009 – թիւ 54, Յունուար 2010 (Միացեալ թիւ)

ԻՆՉՊԷ՞Ս ՏՕՆՈՒԵՑԱՒ
ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ
200-ԱՄԵԱԿԸ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

Պերճ Թէրզեան

Գահիրէ, Հոկտեմբեր 2009

Հաշվի առնելով, որ 1992-ի մարտին Հայաստանի եւ Եգիպտոսի միջեւ դիվանագիտական հարաբերություններ էին հաստատվել, ցուցահանդեսը նեղ ազգային ծիրից դուրս բերելու եւ հայ մամուլի պատմությունը օտար լայն շրջանակներին եւս ներկայացնելու մտահղացմամբ, որոշվել է բացման արարողությանը հրավիրել այդ ժամանակ Եգիպտոսում ՀՀ նորանշանակ դեսպան Էդվարդ Նալբանդյանին: Ապա նկատի առնելով, որ «Ազդարարի» անդրանիկ համարը 1794-ին լույս էր տեսել Մադրասում, պատշաճ է համարվել նաեւ հրավիրել Եգիպտոսում Հնդկաստանի դեսպան տիկին Արունդհաթի Կոշին:

Ցուցահանդեսը տեղի է ունեցել 1994 թվականի նոյեմբերի 3-ին Եգիպտոսի մշակույթի նախարարության հովանու ներքո գործող «Էլ Հանագեր» արվեստի կենտրոնում (Գեզիրեում գտնվող օպերայի տարածքում, տնօրենուհի դոկտ. պրոֆ. Հոդա Ուասֆի): Ըստ ՀՀ դեսպանության տեղեկությունների եւ ցուցահանդեսի ոսկեմատյանում գրանցված արձանագրությունների՝ այցելուների թվում են եղել Ռուսաստանի, Շվեյցարիայի, Դանիայի, Ղազախստանի, Հունգարիայի, Խորվաթիայի, Հարավսլավիայի, Անգոլայի, Վիետնամի, Մալիի եւ Եթովպիայի դեսպանները, Ուկրաինայի, Հարավային Աֆրիկայի եւ Բուլղարիայի հավատարմատարները, Սիրիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Շրի Լանկայի, Նորվեգիայի, Շվեդիայի, Իտալիայի, Լեհաստանի, Չեխիայի, Ավստրիայի եւ Ինդոնեզիայի դեսպանների ներկայացուցիչները, Եգիպտոսի արտգործնախարարության եւ այլ գերատեսչությունների բարձրաստիճան պաշտոնյաներ եւ օտարերկրյա լրատվական գործակալությունների թղթակիցներ:

«Ցուցահանդեսը կարելի է գնահատել որպէս նպատակին հասած ձեռնարկ մը... Եգիպտահայ գաղութին նման փոքրաթիւ գաղութ մը կրցաւ սփիւռքի շատ մը ստուարաթիւ գաղութներուն օրինակ հանդիսանալ, հաւաքական ուժերով իրագործելով նման բարձրորակ... ցուցահանդէս մը, ուր՝ շնորհիւ ՀՀ-ի Եգիպտոսի դեսպանատան զօրավիգին... կարելի կը դառնար հայ մշակոյթի կենսունակ եւ մշտադալար մէկ բնագաւառը պատուաբեր կերպով ծանօթացնել օտարներուն», գրում է Պերճ Թերզյանը գրքույկի վերջում:

Իրոք գովելի աշխատանք են կատարել եգիպտահայ գաղութի մեր հայրենակիցները՝ նախաձեռնելով եւ իրականացնելով նման մի ձեռնարկ: Եվ շնորհակալություն Պերճ Թերզյանին, որ հետաքրքրական մանրամասներով պատմության համար գրել է այդ մասին:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

# Կոմիտասյան պատարագը՝ արցախյան պատերազմի զոհերի հիշատակին

**ՀՀ մշակույթի նախարարության պատվերով, «Վիվասել-ՄՏՍ» ընկերության գլխավոր տնօրեն Ռ. Յիրիկյանի աջակցությամբ միջազգային մրցույթների դափնեկիր «Սպեղանի» երգչախումբը (գեղարվեստական ղեկավար եւ խմբավար Սարինա Ավթանդիլյան) ձայնագրել եւ CD տարբերակով թողարկել է Կոմիտասի Սուրբ պատարագը: Արամ Խաչատրյան տուն թանգարանում երաժշտասերների, մտավորականների, պաշտոնատար այրերի եւ հոգեւոր հայրերի մասնակցությամբ երեկ տեղի ունեցավ ձայնասկավառակի շնորհանդեսը: Շնորհանդեսը բացեց Սարինա Ավթանդիլյանը ու նշեց. «Կոմիտասի մշակմամբ Հայ առաքելական եկեղեցու Սուրբ պատարագի այս ձայնագրության համար հիմք է հանդիսացել Ռոբերտ Աթայանի խմբագրությամբ Կոմիտասի ստեղծագործությունների ժողովածուի 7-րդ հատորը, որտեղ առաջին անգամ առավել ամբողջությամբ ու ճշգրտությամբ են ներկայացված կոմպոզիտորի պատարագի բնագրերը: Մենք ձգտել ենք մեր ուժերի ներածին չափով փոխանցել Կոմիտասի ստեղծագործության երաժշտական լեզվի եւ կերպարային բովանդակության առանձնահատկությունները, նրա աղոթքային վիճակը»:**

**«Ազգի» այն հարցին՝ Կոմիտասի մշակմամբ Պատարագը նախատեսված է տղամարդկանց երգչախմբի համար, բայց ձեր «Սպեղանի» երգչախումբը միայն աղջիկներից է կազմված, արդյոք փոխադրումներ արե՞լ եք, ասաց. «Մենք հեղինակային բնագիրը նույնությամբ փոխադրել ենք աղջիկների երգչախմբի համար: Իսկ քահանայի եւ սարկավագի երգվող բաժինները՝ աղոթքները եւ քարոզները, կազմել ենք հիմք ընդունելով Կոմիտասի կողմից բերված այդ բաժինների սկզբնական եւ վերջնավորվող ֆրազները՝ հավելելով դրանք այդ բաժինների ժամանակակից մեղեդիական տարբերակով»:**

**Ձայնագրությանը նպաստել են Տեր Կորյուն քահանա Մարտիրոսյանը, Տեր Նշան քահանա Սարգսյանը, սարկավագներ Արթուր Տիգրանյանը եւ Առնակ Տերտերյանը: Տկն Ավթանդիլյանը շնորհակալություն հայտնեց բոլոր աջակիցներին ու նրանց նվիրեց ձայնասկավառակի եւ եռալեզու գրքի առաջին օրինակները:**

**Միջազգային մրցույթների դափնեկիր «Սպեղանի» աղջիկների երգչախումբը ստեղծվել է 1996-ին: Իր գործունեության ընթացքում երգչախումբը, գեղղեկ եւ խմբավար Սարինա Ավթանդիլյանի ջանքերով, իրականացրել է մի շարք ծրագրեր, որոնք նպաստել են խմբերգային արվեստի զարգացմանն ու տարածմանը: Երգչախումբը համերգներով շրջագայել է Հայաստանում, Արցախում, Լիբանանում, Իտալիայում, Գերմանիայում եւ Շվեյցարիայում ու մշտապես արժանացել բարձր գնահատանքի՝ դափնեկրի կոչման: «Սպեղանի» երգչախումբը կոմիտասյան պատարագի կատարումներով (հատվածներ) հանդես է եկել նաեւ Մագդեբուրգյան փառատոնում (Գերմանիա):**

**Շնորհանդեսի ավարտին երգչախումբը կատարեց կոմիտասյան պատարագից հատվածներ, ինչպես նաեւ Վաչե Շարաֆյանի, Վահրամ Սարգսյանի, Յուրի Ֆալիկի եւ Սերգեյ Եկիմովի ստեղծագործություններից՝ դրանք նվիրելով արցախյան պատերազմի զոհերի հիշատակին եւ Շուշիի ազատագրման 18-րդ տարեդարձին:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

«ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԳԻՇԵՐՎԱՆ»

# Թանգարանագիտական հանդես

## Լույս է տեսել 1-ին համարը

**2003 թ.-ից գրանցվել եւ Հայաստանում գործում է «Թանգարանային աշխատողների ու բարեկամների ասոցիացիա» ՀԿ-ն (նախագահ՝ Հռիփսիմե Պիկիչյան, տնօրեն՝ Մարինե Հարոյան), որին անդամագրված են եւ շարունակում են անդամագրվել հայաստանյան թանգարանների աշխատակիցներ, ուսանող-կամավորներ: Նշենք, որ ՀԿ-ի գործունեության շրջանակները չեն սահմանափակվում ՀՀ տարածքի միջթանգարանային ցանցում գործող կապերի աշխուժացմամբ կամ միայն Հայաստանի թանգարանների՝ արդեն համակարգված ու նպատակային համագործակցությամբ: ՀԿ-ի շնորհիվ, Հայաստանն այսօր անդամակցում է թանգարանների միջազգային կոմիտեին (ԻԿՕՄ), դրանով իսկ մասնակից է աշխարհի թանգարանների անցուդարձին (ՀԿ-ի անդամներից 20-ը անդամակցում են ԻԿՕՄ-ին):**

**Գալով արվածին ու անելիքներին, ասենք, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի եւ «Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցություն» ընկերության հովանավորությամբ, 2009 թ. լույս տեսած «Թանգարան» հանդեսը կարեւոր քայլ է թանգարանային գործի ու թանգարանների գործունեության ընթացքը լուրջ հարցադրումներով լուսաբանելու համար, ինչպես նաեւ՝ հրաշալի հնարավորություն ոլորտի մասնագետների տեսական ու գործնական փորձառությունը ներկայացնելու:**




**Այն, որ թանգարանագիտական հանդեսը բացվում է ՀՀ Մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի ողջույնի խոսքով՝ հավաստում է, որ թանգարանային գործի հանդեպ Հայաստանում այսօր առկա է պետական վերաբերմունք, իսկ միջազգային փորձագետների ու մասնագետ-խորհրդատուների մասնակցությունն ու դերակատարությունը՝ ոլորտում գործող չափանիշները ճշտելու հետ միասին, մասնագիտական երկլեզու հրատարակումների շնորհիվ, մեծացնում է հանդեսի ընդգրկման ու շրջանառության հնարավորությունները: Ուշագրավ է օրինակ՝ արդի եվրոպական հասարակության կյանքում թանգարանների դերի մասին Բրիտանիայի թանգարանային ասոցիացիայի նախկին նախագահ, այսօր՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Հարավային Կովկասի թանգարանների գծով փորձագետ Բարբարա Վարանցովի հոդվածը (էջ 59), որտեղ կոնկրետ թանգարանների, մասնավորապես՝ Հյուսիսային Իսպանիայի Գուգենհայմի թանգարանի փորձով՝ Նյու Յորքում բացված ժամանակակից արվեստի նույնանուն թանգարանի օրինակով, ներկայացվում է, թե ինչպես թանգարանը կարող է խթանել նաեւ երկրի տնտեսության զարգացմանը, կարեւորվում է թանգարանների մասնակցությունը տեղական կամ միջազգային տոների, փառատոների անցկացման ծրագրերում: Հետաքրքրական է նաեւ մյուս փորձագետ Կարմեն Բեքենբախի՝ մեդիա արվեստի, թանգարանում նոր տեխնոլոգիաներ կիրառելու անհրաժեշտության մասին հրատարակումը (էջ 239, 2008 թ. հոկտեմբերին Հայաստանի ազգային պատկերասրահում անցկացված ուսումնամեթոդական հավաքի աշխատանքային ամփոփագիրը):**

**Հանդեսում զետեղված տասնյակից ավելի գիտամեթոդական հրատարակումներից, ինֆորմացիոն հոդվածներից (որոշ մասը՝ երկլեզու), խոշոր թանգարանների փորձն ու տուն-թանգարանները ներկայացնող հրատարակումներից մինչեւ թանգարանային աշխատողների լրագրողական ակնարկներն ու երախտավորներին նվիրված դիմանկարները, հանդեսը դարձնում են հարուստ ու հետաքրքրական:**

**Կարեւոր հրատարակումներից է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լեւոն Աբրահամյանի՝ Հայոց ինքնության համատեքստում՝ տաճարն, իբրեւ թանգարան եւ թանգարանը՝ տաճար ներկայացնող, անգլերեն հոդվածը՝ հայերեն սեղմագրով: Ուշագրավ են ազգագրագետներ Հռիփսիմե Պիկիչյանի, Աստղիկ Իսրայելյանի, արվեստաբան Մարտին Միքայելյանի հրատարակումները, ինչպես նաեւ՝ կրթական համակարգում թանգարանի դերի մասին Ալվարդ Գրիգորյանի, Արմինե Բաբյանի եւ այլոց հոդվածները: Կարեւոր է նաեւ նշել, որ ավագ սերնդի կողքին տեղ են գտել երիտասարդ մասնագետների հրատարակումները, երեւանյան թանգարանների կողքին զետեղված են մարզային թանգարանները:**

**Հանդեսի էջերում ներկայացված գործնական ծրագրերը եւ արդեն արվածի լուսաբանումները հուշում են, թե որքան նոր անելիքներ կան, թե որն է արդեն 21-րդ դարում մշակվող (էջ 74, Մարինե Հարոյանի հոդվածը) թանգարանային համակարգը, որը նաեւ Հայաստանում հնարավորություն է տալիս տեղեկացված լինել ու ծանոթանալ ժամանակակից աշխարհի թանգարանային փորձին, մասին ու զգալ այսօրվա թանգարանի դիմքը... (Ի դեպ, այս առումով բացառիկ նախաձեռնություն է 2004 թ.-ից Հայաստանում հաստատված եւ անխափան գործող «Թանգարանային գիշեր» ծրագիրը, որին հիշատակված է նաեւ «Թանգարանների աշխատողների եւ բարեկամների ասոցիացիա» ՀԿ-ն եւ գործընկերները գալիս է լրացնելու՝ արդեն ավանդույթ դարձած, ամեն տարի մայիսին, հայաստանյան թանգարաններում իրականացվող, միջոցառումների ծրագիրը).**

**Այսպիսով, 2009 թ. լույս տեսած «Թանգարան» հանդես-տարեգրքի անդրանիկ համարի միջոցով թանգարանային ոլորտի մասին հանգամանորեն տեղեկացված լինելու հետ, տեսանելի է դառնում, թե ՀՀ թանգարանային աշխատողների համար որքան հնարավորություններ կան ընդգրկվելու ինչպես արդեն գործող ծրագրերում, այնպես էլ՝ նոր ձեւավորվող նախագծերի մշակման եւ իրագործման ընթացքի մեջ: Իհարկե, հանդեսի շարունակականության դեպքում թանգարանային մասնագետների համար հնարավորություն կստեղծվի շարունակ հարցերի շուրջ արտահայտել սեփական մտածումները, ուշադրության արժանի նախագծերը դնել քննարկման, իսկ «Թանգարան» հանդես-տարեգրքի 2-րդ համարի հրապարակումը արդեն ընթացքի մեջ է, ու ընթացքի մեջ են նորանոր գաղափարներ, որ սա Աստված՝ իրականություն դառնան:**

ԳՈՀԱՐ ԳԱԼՍՏՅԱՆ
Գրականության եւ արվեստի թանգարանի գրական բաժնի ավագ գիտաշխատող

AZG NEW PDF.qxd 11/05/2010 21:17 Page 1



# Նորեկ «Ֆուլհեմն» ընդդեմ փորձառու «Ատլետիկոյի»

*Այսօր Համբուրգում կկայանա Եվրոպայի լիգայի եզրափակիչը*

Այսօր Համբուրգի «Համբուրգ Արենա» մարզադաշտում ֆուտբոլի Եվրոպայի լիգայի անդրանիկ խաղարկության եզրափակչում գավաթը կվիճարկեն անգլիական «Ֆուլհեմն» ու Մադրիդի «Ատլետիկոն»: Հանդիպումը սպասարկելու պատիվը տրվել է իտալացի մրցավար Նիկոլա Ռիցոլիին: Խաղը կսկսվի Երեւանի ժամանակով 23.45-ին:



Եթե «Ատլետիկոն» 5-րդ անգամ է հանդես գալու եվրոպական գավաթների խաղարկության եզրափակչում, ապա «Ֆուլհեմի» համար այսօրվա հանդիպումն առաջին վճռորոշ մրցախաղն է: Ճիշտ է, իսպանական ակումբն առայժմ միայն մեկ անգամ է գավաթակիր դարձել: Դա հեռավոր 1961/62-ի մրցաշրջանում էր, երբ «Ատլետիկոն» Գլազգոյում գավաթակիրների գավաթի մրցաշարի եզրափակիչ խաղում ոչ-ոքի (1-1) խաղաց իտալական «Ֆիորենտինայի» հետ, իսկ Շտուտգարտում կայացած վերախաղարկման ժամանակ հաղթեց 3-0 հաշվով: Այնպես որ իր միակ եվրոպական հաջողությանն «Ատլետիկոն» հասել է հենց Գերմանիայում, որտեղ այսօր կրկին մրցավեճի է բռնվելու:

«Ատլետիկոն» հաջողությանը մոտ էր նաեւ 1974-ին չեմպիոնների լիգայի եզրափակչում, որտեղ ուժերն էր չափում Մյունխենի «Բավարիայի» հետ: 114-րդ րոպեին Իսպանիայի հավաքականի նախկին մարզիչ Լուիս Արագոնեսը մադրիդցիներին հաշվի մեջ առաջ մղեց, սակայն լրացուցիչ ժամանակի վերջին րոպեին Հանս-Գեորգ Շվարցենբեկը վերականգնեց հավասարակշռությունը: Երկու օր անց կայացած վերախաղարկման ժամանակ «Ատլետիկոն» 0-4 հաշվով ջախջախիչ պարտություն կրեց: Վերջին անգամ «Ատլետիկոն» եվրոպական գավաթների խաղարկության եզրափակչում հանդես է եկել 1985/86-ի գավաթակիրների գավաթի մրցաշարում: Լիոնում իսպանացիները 0-3 հաշվով պարտվեցին Կիեւի «Դինամոյին»:

Կիկե Սանչես Ֆլորեսն ընդամենը 6 ամիս է մարզում «Ատլետիկոն», սակայն նրան հաջողվեց վերափոխել թիմի խաղը եւ իսպանացիներին եզրափակիչ դուրս բերել: «Բենֆիկայի» նախկին մարզիչը 2009-ի հոկտեմբերի 23-ին «Ատլետիկոյում» փոխարինեց Աբել Ռեսինոյին, որի օրոք թիմը չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարում վերջին տեղում էր, իսկ Իսպանիայի առաջնության 10 հանդիպումներում հաղթանակ չէր տարել: «Ատլետիկոն» նաեւ մտել է Իսպանիայի գավաթի եզրափակիչ, որտեղ մրցանակը վիճարկելու է «Սեւիլիայի» հետ: Վերջին անգամ Իսպանիայում «Ատլետիկոն» տիտղոսի է արժանացել 1995/96-ին՝ նվաճելով երկրի չեմպիոնի եւ գավաթակրի կոչումները: Սակայն Ֆլորեսի համար Իսպանիայի գավաթի նվաճումը ոչինչ կլինի, եթե թիմին չհաջողվի դառնալ Եվրոպայի լիգայի գավաթակիր:

«Ֆուլհեմի» 62-ամյա գլխավոր մարզիչ Ռոյ Հոջսոնը նախկինում մարզչական ասպարեզում հաջողությունների է հասել: Օրինակ, 1997-ին նրա գլխավորությամբ «Ինտերը» մտել է ՈՒԵՖԱ-ի գավաթի եզրափակիչ: Սակայն Հոջսոնը գտնում է, որ ներկայիս հաջողությունը գերազանցում է իր նախորդ բոլոր նվաճումները:

Երկու թիմերն էլ մարտականորեն են տրամադրված եւ ամեն ինչ ներդնելու են հաջողության հասնելու համար: Չէ՞ որ եզրափակիչ հանդիպման արդյունքով է պայմանավորված թիմերի համար մրցաշրջանը հաջող համարելու փաստը:

# Հաճախելիության ռեկորդ մեկնարկային խաղում

Գերմանիայում մեկնարկած տափօղակով հոկեյի աշխարհի առաջնությունում չեմպիոնի տիտղոսը վիճարկող 16 հավաքականները նախնական փուլում բաժանվել են չորս խմբի:

Առաջնության մեկնարկային խաղում աշխարհի առաջնությունների հաճախելիության նոր ռեկորդ սահմանվեց: Գերմանիայի եւ ԱՄՆ-ի հավաքականների հանդիպումն անցկացվեց Գելզենկիրխենի մարզադաշտում, որտեղ իր ֆուտբոլային հանդիպումներն է անցկացնում տեղի «Շալկե-04-ը»: Առաջնության կազմակերպիչները մարզադաշտում սահադաշտ էին պատրաստել եւ լրացուցիչ նստատեղեր էին նախատեսել: Այս ամենի հետեւանքով հանդիպմանը ներկա գտնվեցին 77183 հանդիսականներ, ինչը հոկեյի խաղերի համար յուրօրինակ ռեկորդ է: Բացման արարողության վարողներից մեկը բռնցքամարտի աշխարհի չեմպիոն Վլադիմիր Կլիչկոն էր:



Ինչ վերաբերում է մեկնարկային հանդիպմանը, ապա դաշտի տերերին հաջողվեց լրացուցիչ խաղափուլում հաղթանակ տոնել 2-1 հաշվով: Իսկ առաջնության մասնակիցներից առաջինը հաջորդ փուլի ուղեգիր նվաճեց Դանիայի հավաքականը: D խմբում հանդես եկող դանիացիները մեկնարկային խաղում 4-1 հաշվով հաղթեցին ֆիններին, իսկ ԱՄՆ-ի ընտրանու հետ հանդիպումը շահեցին լրացուցիչ խաղափուլում (2-1):

Հաջող մեկնարկեց ՌԴ հավաքականը, որն ընդգրկված է A խմբում: Ռուսները 3-1 հաշվով հաղթեցին Սլովակիայի հոկեյիստներին: Նույն խմբում հանդես եկող Բելառուսի հավաքականը 5-2 հաշվով առավելության հասավ ղազախների նկատմամբ:

B խմբից հաջորդ փուլի ուղեգիրն արդեն ապահովել են Կանադայի եւ Շվեյցարիայի հավաքականները, որոնք հիմնական ժամանակում 2-ական հաղթանակ են տոնել: Կանադայի հոկեյիստները հաղթել են Իտալիայի (5-1) եւ Լատվիայի (6-1) հավաքականներին: Նույն թիմերի հետ մրցավեճում շվեյցարացիները հաղթել են համապատասխանաբար 3-0 եւ 3-1 հաշիվներով:

C խմբում չեխերը 6-2 հաշվով հաղթել են ֆրանսիացիներին, իսկ շվեդներն առավելության են հասել նորվեգացիների նկատմամբ (5-2): D խմբում ֆինները 2-րդ խաղում 1-0 հաշվով պարտության մատնեցին գերմանացիներին ու լավ հնարավորություն են պահպանում շարունակելու պայքարը:

# Մահացել է աշխարհի ամենատարեց գրոսմայստերը

Բուդապեշտում մայիսի 8-ին մահացել է աշխարհի ամենատարեց շախմատիստը՝ հունգարացի գրոսմայստեր Անդրե Լիլիենտալը: Մայիսի 5-ին նա նշել էր իր 99-ամյակը: Նա ծնվել էր Մոսկվայում, հրեայի ընտանիքում: Երկու տարի անց նա ընտանիքով տեղափոխվեց Բուդապեշտ: Ամուսնությունից հետո, 1939-ին Լիլիենտալը կրկին բնակություն հաստատեց Մոսկվայում, խորհրդային քաղաքացիություն ընդունեց եւ մինչեւ 1976-ը մնաց ԽՍՀՄ-ում: Հետագայում մոր խնդրանքով նա տեղափոխվեց Հունգարիա:

Նրա շախմատային կարիերայի լավագույն շրջանը 1930-ականներն էին: 1933-34-ին նա հաղթող ճանաչվեց Ույպեշտի եւ Բարսելոնի միջազգային մրցաշարերում, իսկ Հաստինգսում 2-3-րդ տեղերը բաժանեց Ալյոխինի հետ:

Տարբեր տարիների նա խաղացել եւ հաղթել է աշխարհի 6 հռչակավոր չեմպիոնների՝ Ալեքսանդր Ալյոխինին, Խոսե Ռաուլ Կապաբլանկային, Միխայիլ Բոտվիննիկին, Էմանուել Լասկերին, Մաքս Էյվեին եւ Վասիլի Սմիսլովին: Շախմատի մասնագետները Լիլիենտալի հաղթական պարտիան Կապաբլանկայի հետ համարում են լավագույններից մեկը պատմության մեջ:

1950-ին Լիլիենտալն ընդգրկվեց այն 27 հռչակավոր շախմատիստների ցանկում, որոնց ՖԻԴԵ-ն առաջինը շնորհեց միջազգային գրոսմայստերի տիտղոս:

ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆ

# Եվս մեկ ուղեգիր

Ինչպես տեղեկացանք ՀԱՕԿ-ի մամուլի քարտուղարության պատասխանատու **Նաթելա Հովասափյանից**, օգոստոսի 15-26-ը Սինգապուրում անցկացվելիք պատանեկան օլիմպիական խաղերի հայաստանցի մասնակիցների թիվն ավելացավ եւս մեկով: Հրաձգության միջազգային ֆեդերացիան մրցումներին մասնակցելու իրավունք է տվել երեւանցի 18-ամյա հրաձիգ Ռոմիկ Վարդումյանին:

Հայ պատանի հրաձիգն ատրճանակով մրցումների որոշակի փորձ ունի: Նա մասնակցել է աշխարհի եւ Եվրոպայի պատանեկան ու երիտասարդական առաջնություններին, որոնցում միջին հորիզոնականներում է տեղ զբաղեցրել: Բացի Ռոմիկ Վարդումյանից, Սինգապուրում Հայաստանը կներկայացնեն 2 ծանրորդներ, մեկական ձյուդոյիստ ու մարմնամարզիկ:

Վարկանիշային մրցումները շարունակվում են եւ Հայաստանը դեռ հնարավորություն ունի ավելացնելու մարզիկների քանակը:

# Մեկնարկն առատ էր ոչ-ոքիներով

Վլադիմիր Հակոբյանը Բորիս Գելֆանդի հետ ոչ-ոքի արդյունքով մեկնարկեց Աստրախանում սկսված շախմատի Գրան պրիի մրցաշարի վերջին փուլում: Մեկնարկային տուրն աչքի ընկավ ոչ-ոքիների առատությամբ: Հաշտություն կնքեցին նաեւ Պավել Էլյանովն ու Պյոտր Սվիդլերը, Շահրիյար Մամեդյարովն ու Դմիտրի Յակովենկոն, Վան Յուեն ու Պետեր Լեկոն, Եվգենի Ալեքսեեւն ու Թեյմուր Ռաջաբովը, Էռնեստո Ինարկիեւն ու Ռուսլան Պոնոմարյովը:

Միակ արդյունավետ պարտիան Վուգար Հաշիմովի եւ Վասիլի Իվանչուկի մրցավեճն էր, որում հաղթեց ադրբեջանցի գրոսմայստերը: Հենց նա էլ 1 միավորով գլխավորեց աղյուսակը: 2-րդ տուրում Հակոբյանը սեւերով կխաղա Պավել Էլյանովի հետ:

# Հաջող տուր

Սարաեւոյի շախմատի մրցաշարի 6-րդ տուրում Դավիթ Պետրոսյանը ոչ-ոքի խաղաց Ալեքսանդր Ֆիեռի հետ ու վաստակեց 4 միավոր: Աղասի Ինանցը 3-րդ հաղթանակը տոնեց՝ պարտության մատնելով Վլադո Յակովլեւիչին: Նա ունի 3,5 միավոր:

6 տուրից հետո 5,5-ական միավորով աղյուսակը գլխավորում են Արտյոմ Տիմոֆեեւն ու Յան Գուստաֆսոնը, որոնց կեսական միավոր են զիջում Հառ Վանգն ու Նարայանան Գոպալը:

# Մովսիսյանը զիջում է դիրքերը

Իտալական Սալոու քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի 7-րդ տուրում Կարեն Մովսիսյանը հաշտություն կնքեց Միխայիլ Շարոտսկինի հետ ու վաստակեց 4 միավոր: Նա 69 մասնակիցների մեջ զբաղեցնում է 23-րդ հորիզոնականը: Առաջատարն ուկրաինացի Սերգեյ Ֆեդորչուկն է, որն ունի 6 միավոր: 4 շախմատիստներ 5,5-ական միավորով հետապնդում են նրան:

# Ուեբերը հավատարիմ է ավանդույթին

«Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի աշխարհի առաջնության հերթական փուլն անցկացվեց Իսպանիայում: Այն ավարտվեց «Ռեդ Բուլի» ավտոմրցարշավորդ Մարկ Ուեբերի հաղթանակով: Ընթացիկ մրցաշրջանում առաջին անգամ որակավորման մրցումներում լավագույն արդյունքը ցույց տված մարզիկը հաղթող ճանաչվեց ավտոմրցավազքում: Մարկ Ուեբերը մարզական իր կարիերայում 3-րդ Գրան պրին շահեց: Նա հավատարիմ մնաց Իսպանիայի Գրան պրիի խաղարկություններում հաստատված ավանդույթին, որի համաձայն 2001-ից հաղթող է ճանաչվում որակավորման մրցումներում առաջին տեղը զբաղեցրած մարզիկը:

Ընթացիկ մրցաշրջանում Միխայիլ Շումախերը ցույց տվեց իր լավագույն արդյունքը՝ վերջնագիծը հատելով 4-րդը: Իսկ ընդհանուր հաշվարկով մրցումների առաջատար Ջենսոն Բատոնը պահպանեց իր դիրքերը: Նա վաստակել է 70 միավոր: 2-րդ տեղում Ֆեռնանդո Ալոնսոն է՝ 67 միավոր: Լավագույն եռյակը եզրափակում է Սեբաստիան Ֆետելը՝ 60 միավոր:

«Կոնստրուկտորների գավաթի» խաղարկությունում առջեւից է ընթանում «Մակլարենը», որն ունի 119 միավոր: 2-րդ տեղում «Ֆերարին» է (116), 3-րդ հորիզոնականը զբաղեցնում է «Ռեդ Բուլը» (113):

# Չեմպիոն արդյունավետության նոր ռեկորդով

Անգլիայի առաջնության ավարտական տուրում 8-0 ռեկորդային հաշվով պարտության մատնելով «Վիգանին», Լոնդոնի «Չելսին» նվաճեց երկրի չեմպիոնի տիտղոսը: Կառլո Անչելոտիի սաները նաեւ արդյունավետության յուրօրինակ ռեկորդ սահմանեցին՝ առաջնության 38 հանդիպումներում խփելով 103 գնդակ: Պրեմիեր լիգայի նախկին լավագույն ցուցանիշը պատկանում էր ընթացիկ առաջնությունում 2-րդ տեղը զբաղեցրած «Մանչեսթր Յունայթեդին», որը 1999/2000 մրցաշրջանում 97 գոլ էր խփել:



«Չելսին» 38 հանդիպումներում վաստակեց 86 միավոր եւ մեկ միավորով գերազանցեց «Մանչեսթր Յունայթեդին»: Բրոնզե մրցանակակիր դարձավ «Արսենալը»: Ավարտական խաղում դառնալով հեթ-տրիկի հեղինակ, Դիդյե Դրոգբան գոլերի թիվը հասցրեց 29-ի ու շրջանցելով Ուեյն Ռունիին (26 գոլ), ճանաչվեց պրեմիեր լիգայի լավագույն ռմբարկու:

«Չելսին» իր պատմության մեջ 4-րդ անգամ դարձավ Անգլիայի չեմպիոն: 21-րդ դարում դա լոնդոնցիների չեմպիոնական 3-րդ տիտղոսն էր: Վերջին անգամ «Չելսին» լավագույնն էր ճանաչվել 2006-ին Ժոզե Մոուրինյոյի գլխավորությամբ: Վերջինիս գլխավորությամբ «Չելսին» 2 տարի անընդմեջ ուժեղագույնն էր ճանաչվել Անգլիայում: Կառլո Անչելոտին հույս ունի կրկնելու պորտուգալացի մարզչի ցուցանիշը: Նա Անգլիայի գավաթի եզրափակիչից հետո հանդիպելու է ակումբի նախագահ Ռոման Աբրամովիչին, որպեսզի որոշեն, թե հաջորդ մրցաշրջանում թիմի կազմն ուժեղացնելու համար ինչպիսի քայլեր են անհրաժեշտ:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# «Ոստիկաններն առաջինն են ոտնահարում մարդու իրավունքները»

## Ասում է Լարիսա Ալավերդյանը

Թեպետ ոստիկանությունը կոչված է պահպանելու հասարակության անդորրն ու քաղաքացիների իրավունքները, սակայն երբեմն հենց նրանք են ոտնահարում եւ խախտում մարդու իրավունքները: Չարենցավանի ոստիկանությունում տեղի ունեցած պատահարը, երբ ինքնասպանություն գործեց Վահան Խալաֆյանը, ասվածի ամենաթարմ ապացույցն է: «Եթե Խալաֆյանն ինքնասպանություն է գործել՝ մարդու իրավունքների նորմերը պահանջում են, որ պատժվի այդ պահին պատասխանատու պաշտոնական անձը: Պետք է պատժել ոստիկանին՝ լիազորությունները չկատարելու համար: Տարիներ առաջ Լեւոն Գուլյանի դեպքի մանրամասները չվերհանվեցին, մեղավորները չպատժվեցին: Վահան Խալաֆյանի դեպքը Գուլյանի դեպքի կրկնությունն է, ինչը կարող է դառնալ վտանգավոր միտում: Համակարգում աշխատող ոստիկանների պրոֆեսիոնալ մակարդակի վերաբերյալ կասկածներ չունեմ: Սա նշանակում է, որ առկա է սխալ ճանապարհով գնացող քաղաքական կամք կամ էլ պատվեր է, պարտադրանք», **«Ազգի»** զրույցում ասաց մարդու իրավունքների առաջին պաշտպան **Լարիսա Ալավերդյանը:**

Անդրադառնալով մարդու իրավունքների պաշտպանության խնդրին՝ Ալավերդյանը նկատեց, որ ոստիկաններն առաջինն են ոտնահարում մարդու իրավունքները: «Ոստիկանը պետք է վնասազերծի հասարակական վտանգը: Ոստիկանության պարտականությունն է վնասազերծել հասարակությանը վնաս հասցնող անձին: Բայց իրականությունն այլ է: Արդեն երկար տարիներ վարչական պրակտիկա է դարձել ծեծը կիրառել որպես ինքնուրույն պատիժ, ինչից խախտվում է անմեղության կանխավարկածը: Ոստիկանական համակարգում տեսնում ենք խախտումների փունջ, եւ դա կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ համաչափ պատժելիության սկզբունքը չի գործադրվում»:

Մարդու իրավունքների առաջին պաշտպանը նկատում է, որ օրինազանցություն թույլ տված ոստիկանը պետք է պատժվի՝ ցույց տալով ոստիկանին եւ հասարակությանը, որ օրենքի ուժը ամենաբարձրն է:

«Անպատժելիության պայմաններում վտանգում ենք նաեւ ոստիկանությանը: Թողտվության մթնոլորտ է, նրանք կարող են մեղքերը բարդել այն մեկի վրա, որից ուզում էին վաղուց ազատվել: Նման դեպքեր կան, եւ հասարակության մեջ դա բացասական արձագանք է գտնում: Հարգանք օրենքի հանդեպ չկա, որովհետեւ օրենքով ապրող անձը հայտնվում է տուժողի կարգավիճակում», ասում է նա՝ հավելելով, որ տարիներ շարունակ ՄԻՊ գրասենյակի ներկայացրած տվյալների համաձայն՝ ամենից շատ մարդու իրավունքները ոտնահարում են ոստիկանները:

Գնահատական չտալով Արմեն Հարությունյանի գործունեությանը՝ Ալավերդյանն ասաց, որ մինչեւ իշխանությունների վերաբերմունքը չփոխվի, հասարակությունը ակտիվորեն չհամագործակցի, գրասենյակի աշխատանքն ավելի կպասիվանա: «Մարտի 1-2 դեպքերի ժամանակ ամենացավալի երեւույթն այն էր, որ ՄԻՊ աշխատակազմի ղեկավարի ոչ ճիշտ կեցվածքի եւ դրսեւորումների պատճառով կանգնեցվեց փաստահավաք խմբի աշխատանքը, ինչը մեծ օգուտ կբերեր հասարակությանը: Աշխատանքը կանգնեցվեց որոշ մարդկանց քմահաճույքների պատճառով»: Նա նկատում է, ՄԻՊ գործողություններում կա պասիվություն, ավելի քիչ հնչեղություն ունեցող գործերի առնչվելու միտում: Ալավերդյանը նկատում է, որ բանակում մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից դրական փոփոխություններ են կատարվում: «Սակայն բանակում էլ են պատահում մահացության դեպքեր, մինչդեռ մարդու իրավունքների պաշտպանն այնտեղ ունի հատուկ ներկայացուցիչ: Եթե տեղի են ունենում նմանատիպ դեպքեր, նշանակում է՝ կան թերացումներ, եւ ավելի ակտիվ միջամտելու խնդիր կա: Կիրրդրեի կանխարգելիչ գործողություններ իրականացնել, այլ ոչ թե լինել պասիվ եւ սպասել բողոքների», եզրափակեց նա:

Հ. Հ.

# Ֆիզիկական եւ հոգեբանական ճնշումը հարկադրել էր ինքնասպանության

Հատուկ քննչական ծառայությունում ավարտվել է ոստիկանության ակադեմիայի ուսանողի ինքնասպանության փորձ կատարելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունը: Հիշեցնենք, որ հունվարի 19-ին, ժամը 09.30-ի սահմաններում ոստիկանության ակադեմիայի 1-ին կուրսի գերազանց սովորող ուսանող Վ. Գ.-ն ակադեմիայի վարչական շենքի 5-րդ հարկի լուսամուտներից մեկի պատուհանից ինքնասպանություն կատարելու նպատակով իրեն ցած է նետել: «Արմենիա» բժշկական կենտրոնի բժիշկների օպերատիվ միջամտության արդյունքում տղայի կյանքը հաջողվել է փրկել: Նախաքննությամբ պարզվել է, որ ակադեմիայի 1-ին կուրսի ուսանողներ, 1-ին վաշտի 3-րդ դասակի հրամանատար Հ. Համբարձումյանը եւ կրտսեր սերժանտ Գ. Բարեյանը հունվարի 18-ից՝ մոտավորապես ժամը 23.30-ից մինչեւ հունվարի 19-ի առավոտյան, նույն կուրսի սովորող Վ. Գ.-ին ենթարկել են ֆիզիկական եւ հոգեբանական ճնշման, հարկադրել կատարել նրա պարտականությունների մեջ չմտնող անպատշաճ աշխատանքներ: Վ. Գ.-ն չդիմանալով նվաստացմանը փորձել է ինքնասպանություն կատարել:

Ձեռք բերված ապացույցների հիման վրա Հ. Համբարձումյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր.-ի 110-րդ հոդվածի 1-ին մասով: Քրեական գործն ուղարկվել է առաջին ատյանի դատարան:

Մ. Մ.

# Ժամանակակից բժշկական սարքավորումների գործարան Երեւանում

Երեկ նախագահ Սերժ Սարգսյանը ներկա գտնվեց Երեւանում ռուսական «Աֆինա պալադա» ընկերության «ՍՄՏ» ժամանակակից բժշկական սարքավորումների գործարանի հիմնարկեքի արարողությանը: Գործարանը կսկսի աշխատել 2011-ի առաջին եռամսյակից, նախատեսվում է, որ հենց այդ ժամանակահատվածում գործարանը կտա իր առաջին արտադրանքը: Կարտադրվեն մեկանգամյա օգտագործման բժշկական իրեր՝ ներարկիչներ, ասեղներ եւ այլն: Նախատեսվում է, որ գործարանի արտադրության շրջանակները հետագայում կընդլայնվեն, արտադրանքը նաեւ կարտահանվի: Ռուսաստանցի հայ գործարարների խոսքերով, որոնք էլ հենց իրականացնում են գործարանի կառուցման ներդրումները, բժշկական ժամանակակից սարքավորումների գործարանը կապահովի շուրջ 800 աշխատատեղ, որից ավելի քան 400-ը՝ գործունեության առաջին փուլում:

Նախագահ Սարգսյանը ներկա էր գործարանի առաջին քարի տեղադրմանը: Արարողության ներկա ՀՀ էկոնոմիկայի նախարար **Ներսես Երիցյանը** նշեց. «Դեղագործության ոլորտը այն առաջնահերթներից է, որտեղ բարձր ոլորտի աշխատատեղերի պահանջարկ կա, իսկ Հայաստանն այստեղ ունի մրցակցային առավելություն: Այս գործարանն իր էությամբ բարձրակարգ է, որը նոր միջազգային չափանիշներով պետք է աշխատի եւ, բացի այդ, արտահանման պոտենցիալ ունեցող գործարան է: Կիրականացվեն մեծածավալ ներդրումներ հատկապես այդ ուղղությամբ, քանի որ արտադրության ծավալները շատ ավելին են լինելու, քան Հայաստանի պահանջարկն է»:




Ն. Մ.



# Կենտրոնական բանկի խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը մայիսի 11-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանը, փոփոխություններ և լրացում կատարեց «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկությունների փոխանակման և Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ հաշվետվությունների ներկայացման» կարգում: Փոփոխություն կատարվեց «Երաշխիքային վճարները հաշվարկելու և բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին երաշխիքային վճարները հաշվարկելու, ավանդատուների թվի և հատուցման ենթակա գումարի վերաբերյալ հաշվետվության ներկայացման» կարգում:

ԿԲ խորհուրդը որոշեց հրապարակել ՀՀ ԿԲ 2010 թ. առաջին եռամսյակի «Բանբերը»:

Խորհրդի որոշմամբ վերաձևակերպվեց անհատ ձեռնարկատեր Արթուր Քոչինյանի փոխանակման կետի թիվ 572 արտարժույթի առուվաճառքի լիցենզիան, արտարժույթի առուվաճառք իրականացնելու լիցենզիա տրամադրվեց «Վաղարշ և որդիներ» ՍՊԸ-ին, իսկ «ԻՆՈՒՍ-ԿՐԵԴԻՏ» ՍՊԸ-ն ստացավ գրավատան կազմակերպման լիցենզիա: Ուժը կորցրած ճանաչվեցին «Դեվկո» ՍՊԸ-ի գրավատան կազմակերպման, «Ինկոր» ՍՊԸ-ի գրավատան կազմակերպման թիվ ԳԳ-Ե 172, «Արմեն-Կրտսեր» ՍՊԸ-ի գրավատան կազմակերպման թիվ ԳԳ-Ե 193 և Գոռ Մովսիսյանի արտարժույթի առուվաճառքի թիվ 733 լիցենզիաները:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

Call for Applications

USAID FROM THE AMERICAN PEOPLE

FORECAST Human and Institutional Capacity Development Project

***Participatory Evaluation of the Armenian American Cultural Associations Expansion of the Armenian American Wellness Center Partnership Program, implemented under the USAID Global Development Alliance Grant Agreement***
***Local Expert***

**OPENING DATE:** **May 11, 2010**
**CLOSING DATE:** **May 26, 2010 12:00pm**
**Location:** **Yerevan, Armenia**

Job Description: The United States Agency for International Development (USAID) Mission to Armenia and the Academy for Educational Development (AED/Armenia) are recruiting one local Armenian expert for the Participatory Evaluation of the Armenian American Cultural Associations Expansion of the Armenian American Wellness Center Partnership Program, implemented under the USAID Global Development Alliance Grant Agreement. The incumbent will be working full time in June July 2010 for a period of up to 25 working days.

**Job Responsibilities:**
- Provide the international expert with background information about the health sector situation in Armenia;
- In consultation with international expert interview various stakeholders, collect and analyze data about the issues related to the AAWC operations including human resources, management, administration, legal/regulatory framework, etc.;
- Prepare a summary of the discussions with an effort to identify key points;
- Work closely with the international expert in identifying the work plan and methodology, in sharing all obtained information and in conducting the evaluation;
- Support the international expert in data collection and analysis as well as in report writing;
- In cooperation with designated AAWC representative set up all data collection meetings and site visits to the extent possible prior to expert arrival (if needed);
- Provide translation to assist the international expert as needed;
- Coordinate activities in post-evaluation period with USAID/Armenia, AED/Armenia, international expert and local counterparts.

**Required Qualifications:**
- Graduate or post-graduate level academic background in Public Health, Health Administration, International Health and Development or related fields
- Professional level experience in Public Health, Health Administration, International Health and Development or related field
- Excellent communication and interpersonal skills
- Proven and advanced data management and data analysis skills
- Flexibility of working hours and ability to complete multiple tasks
- Fluency in English

**HOW TO APPLY:**
Interested applicants should apply by submitting below mentioned documents to AED/Armenia office. Applications will be accepted until noon local time on Wednesday, May 26, 2010.

**Required documents:**
- A cover letter stating:
  - Qualifications for the given position
  - The experience in Public Health, Health Administration, International Health and Development or related fields
  - Availability and preferred dates of engagement (in June July 2010)
- A resume
- Names and contact information for two references
- A writing sample produced during engagements similar to this Scope of Work
- 1420 bio-data form

***For more information please visit AED Armenia website www.aed.am***

Ամերիկյան դեսպանատունը **կազմակերպում է**

գրասենյակային ու բնակարանային կահույքի, մեքենաների, համակարգիչների և այլ ապրանքների աճուրդային վաճառք, որը տեղի կունենա մայիսի 22-ին Ամերիկյան փողոց 1 հասցեում ժամը 10-19: Ապրանքները կարող եք զննել տեղում վաճառքին նախորդող ուրբաթ օրը, մայիսի 21-ին ժամը 10-19: Զննումն անվճար է:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել www.usa.am էջի հայտարարությունների բաժինը:

**ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 11.05.2010 թ.**

| ISO-ի կոդը | Միավոր | Արտարժույթ | Միջին փոխարժեք |
|---|---|---|---|
| USD | 1 | ԱՄՆ դոլար | 388.86 |
| EUR | 1 | ԵՎՐՈ | 493.31 |
| RUR | 1 | Ռուս. ռուբլի | 12.85 |
| GEL | 1 | Վրաց. լարի | 218.66 |



Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 11.05.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: